



ՄԱԿ-Ի
ԿԱՆԱՆՑ
ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ
ՎԵՐԱՑՄԱՆ
ԿՈՄԻՏԵԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒՂՂԱԾ
ԵԶՐԱԹԱԿԻՉ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ
ԸՆԹԱՑՔԸ. **ՁԵՎՈՒՅՑ**

ՄԱԿ-Ի ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ, ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2022

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ



ՄԱԿ-ի ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ՝
 ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ. ՁԵԿՈՒՅՑ

Հեղինակ՝ Վարսեր Կարապետյան

Խմբագիրներ՝ Նիկոլայ Հովհաննիսյան, Ազնիվ Նապյան

Այս հրապարակումը պատրաստվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատարի գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի կողմից ՄԱԿ-ի Եզրափակիչ դիտարկումների իրականացման վերլուծություն և իրազեկվածության բարձրացում» նախագծի շրջանակում: Նախագծի նպատակն է խթանել ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը և բարելավել պետության քաղաքականության համապատասխանությունը մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերին:

Բովանդակություն

Հիմնական հասպավումների ցանկ.....	5
Ներածություն.....	6
ԲԱԺԻՆ 1. ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ	9
ԲԱԺԻՆ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ	16
ԲԱԺԻՆ 3. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ	24
ԲԱԺԻՆ 4. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊՆԵՐ. ԴՐԱՆՑ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԸ ՈՒ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ	33
ԲԱԺԻՆ 5. ԹՐԱՏԻՔԻՆԳ ԵՎ ՊՈՈՆԿՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ	40
ԲԱԺԻՆ 6. ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՈՒ ԴՐԱ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ	45
ԲԱԺԻՆ 7. ԿԱՆԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	56
Ամփոփում	62
Օգտագործված աղբյուրներ	63

Հիմնական հասպտումների ցանկ

Հանձնարարական կամ առաջարկություն Կիրառվում են փոխադարձաբար՝ մատնանշելու Կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներում ՀՀ Կառավարությանը ներկայացված կատարման ենթակա ցուցումներ¹

Եզրափակիչ դիտարկումներ Մասնակից պետության պարբերական հաշվետվության (հաշվետվությունների) քննարկման արդյունքում մասնակից պետությանը ներկայացվող հանձնարարականներ (այդ հանձնարարականներն ամփոփող փաստաթուղթ)

Կառավարություն Հայաստանի Հանրապետության Կառավարություն

Կոմիտե Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե

Կոնվենցիա Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (1979 թ.)

ՀԿ Հասարակական կազմակերպություն

Հայաստան, պետություն կամ մասնակից պետություն Հայաստանի Հանրապետություն

ՀՀ օրենսդրություն կամ օրենսդրություն Օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ամբողջություն

Պարբերական հաշվետվություններ Կոնվենցիայի դրույթների կատարման համար և այդ կապակցությամբ ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ Կառավարության ներկայացրած զեկույցները

¹ Ընդունված մոտեցման համաձայն՝ Եզրափակիչ դիտարկումները և հանձնարարականները նույնն են, օգտագործվում են փոխադարձաբար, սույնի շրջանակում դրանք տարբերակված են տեքստի շարադրանքը հեշտացնելու նկատառումով:

Ներածություն

Աշխատանքի նպատակը. Աշխատանքի նպատակն է Եզրափակիչ դիտարկումների ուսումնասիրությունը, ինչպես նաև Կոմիտեին Կառավարության ներկայացրած պարբերական հաշվետվությունների, ՀՀ օրենսդրության ուսումնասիրության և Եզրափակիչ դիտարկումների հետ դրանց համադրման միջոցով վերջիններիս կատարման, նաև չկատարման կամ մասնակի կատարման օրինաչափությունների վերհանումն ու ՀՀ Կառավարության համար ոլորտային առաջնահերթությունների սահմանումը: Ըստ առաջ քաշված նպատակի՝ աշխատանքի խնդիրներն են.

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի 1997, 2002, 2009 և 2016 թվականների Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումների ուսումնասիրությունը,
- Կոմիտեին Կառավարության ներկայացրած պարբերական հաշվետվությունների վերլուծությունն ու վերաբերելի ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը,
- Հայաստանի կողմից Եզրափակիչ դիտարկումներում առաջ քաշված առաջարկությունների կատարման ընթացքի, նաև չկատարման գնահատումը,
- առաջարկությունների կատարման, նաև չկատարման հարցում առկա օրինաչափությունների պարզումը, ինչպես նաև Կառավարության համար ոլորտային առաջնահերթությունների սահմանումը:

Աշխատանքի մեթոդաբանությունը. Սույն աշխատանքի ընթացքում կիրառվել են որակական հետազոտության մեթոդներ: Մասնավորապես, ժամանակագրական կարգով ուսումնասիրվել են 1997, 2002, 2009 և 2016 թվականների Եզրափակիչ դիտարկումները, Կոմիտեին Կառավարության ներկայացրած պարբերական հաշվետվությունները: Եզրափակիչ դիտարկումներում նշված առաջարկությունների՝ ՀՀ-ի կողմից կատարման ընթացքի գնահատման նպատակով մանրամասն ուսումնասիրության են ենթարկվել ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրություն(ներ)ը, օրենքներն ու ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, այդ թվում՝ առանձին ոլորտների առնչությամբ ՀՀ Կառավարության հաստատած ռազմավարությունները (նաև միջոցառումների ծրագրերը) և հայեցակարգերը:

Միաժամանակ համեմատական վերլուծություն է անցկացվել նույն կամ հարակից ոլորտ(ներ)ի վերաբերյալ Կառավարության՝ տարբեր ժամանակահատվածների համար հաստատած ռազմավարությունների կամ հայեցակարգերի միջև՝ հատկապես առաջարկությունների չկատարման պատճառները պարզելու, ինչպես նաև դրանց կատարման, նաև չկատարման օրինաչափությունները համապարփակ գնահատելու նպատակով: Բացի այդ՝ առանձնահատուկ ուշադրության առարկա են դարձել համապատասխան օրենսդրական փոփոխությունները՝ ՀՀ օրենսդրությունը Եզրափակիչ դիտարկումներում արված առաջարկություններին համապատասխանեցնելու գործընթացը և դրա շրջանակները լիարժեք գնահատելու նպատակով: Ուսումնասիրվել են նաև վերաբերելի օրենսդրական ակտերի նախագծերը, օրինակ՝ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, դրանց չընդունման

պատճառները բացահայտելու միջոցով գնահատվել են ընդհանրապես առաջարկությունների չկատարման պատճառներն ու օրինաչափությունները: Վերջապես յուրաքանչյուր առանձին առաջարկության կտրվածքով ուսումնասիրվել է նաև Կառավարության վերջին՝ 7-րդ պարբերական հաշվետվությունը (2020 թ.)՝ պարզելու վերջին Եզրափակիչ դիտարկումների ներկայացումից (2016 թ.) հետո Կառավարության՝ առաջարկությունների կատարման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը. Աշխատանքը սկսվում է առաջին՝ 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումներում տրված յուրաքանչյուր առանձին առաջարկության շարադրանքից, ինչն էլ Աշխատանքի կառուցվածքային հիմքն է, այսինքն՝ Աշխատանքը կազմված է ըստ առանձին առաջարկությունների՝ որպես բաժիններ՝ մեկ բաժնի մեջ միավորելով հարակից հանձնարարականները: Առաջարկությունները և դրանց կատարման ընթացքն ուսումնասիրվում են ժամանակագրական կարգով՝ ավելի վաղ ներկայացված Եզրափակիչ դիտարկումներից մինչև ավելի ուշ ներկայացվածները և դրանց կատարման նպատակով ձեռնարկված քայլերը: Աշխատանքի նման կառուցվածքն ու մեթոդաբանական մոտեցումը թույլ են տալիս ցույց տալ կոնկրետ առաջարկությունների կատարման ուղղությամբ ՀՀ Կառավարության ձեռնարկած օրենսդրական քայլերի, քաղաքականությունների էվոլյուցիան՝ դրանց ներկայացումից մինչև կատարում (չկատարում կամ մասնակի կատարում)՝ Աշխատանքում առաջ քաշված նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու նպատակով:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան² ընդունվել է 1979 թվականի դեկտեմբերի 18-ին: ՀՀ-ն կոնվենցիան վավերացրել է 1993 թվականին առանց վերապահումների: Հայաստանի Հանրապետության համար այն ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 13-ից՝ դառնալով ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: 2006 թվականի մայիսին Հայաստանի Հանրապետությունը նաև միացավ Կոնվենցիայի Կամընտիր արձանագրությանը³ ընդունելով Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն ներկայացված հաղորդագրություններն ընդունելու և քննարկելու Կոմիտեի իրավասությունը:

Կոնվենցիայի վավերացումից հետո Հայաստանի վերաբերյալ ներկայացվել են 4 Եզրափակիչ դիտարկումներ (1997, 2002, 2009 և 2016 թվականներին) Կառավարության ներկայացրած ընդհանուր 6 պարբերական հաշվետվությունների առնչությամբ⁴: Սույն հետազոտության շրջանակում Կոմիտեի ներկայացրած հանձնարարականները և դրանց կատարման ուղղությամբ ՀՀ իշխանությունների ձեռնարկած քայլերը խմբավորվել են 7 բաժինների ներքո:

² Կոնվենցիայի ամբողջական տեքստի համար տե՛ս <https://www.arlis.am/documentView.aspx?docID=60505>:

³ Կոնվենցիայի Կամընտիր արձանագրության ամբողջական տեքստի համար տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=31426>:

⁴ Կոմիտեի վերջին երկու Եզրափակիչ դիտարկումները՝ 2009 թ. և 2016 թ., համապատասխանաբար ներկայացվել են Կառավարության միավորված 3-րդ և 4-րդ (2009 թ.) ու 5-րդ և 6-րդ (2016 թ.) պարբերական հաշվետվությունների կապակցությամբ: Ի դեպ, Կառավարությունը 2020 թվականին ներկայացրել է հերթական՝ 7-րդ պարբերական հաշվետվությունը, որը ևս ուսումնասիրվել է սույն հետազոտության շրջանակում:

Ինչպես նշվել է վերևում, ՀՀ Կառավարությունը Կոմիտեին ներկայացրել է 7 պարբերական հաշվետվություններ, որոնցից վերջինը՝ 2020 թվականին: Պարբերական հաշվետվության դիտարկումը նախատեսված է 2022 թվականի սեպտեմբերի 12-ին, ինչով պայմանավորված՝ սույն հետազոտությունն է՝ լ առավել կարևորություն ունի: Հատկանշական է, որ Կառավարությունն իր սկզբնական (1997 թ.՝ վերանայված տարբերակը) և հետագա պարբերական հաշվետվություններում (1999 թ. և 2007 թ.) ընդհանուր բնույթի հիմնախնդիրների մեջ նշում է անցումը շուկայական տնտեսության՝ դրանից բխող տնտեսական և սոցիալական բնույթի բոլոր բարդություններով, ինչպես նաև Ղարաբաղյան պատերազմը, շրջափակումը, երկրաշարժը և այլն՝ դրանցով բացատրելով մինչ այդ տրված առաջարկությունների կատարման անհնարինությունը կամ դժվարությունը: Սա կարևոր է Հայաստանի կողմից առանձին առաջարկությունների չկատարման պատճառները գնահատելու առումով:

ԲԱԺԻՆ 1. ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋԻԱՂԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Կանանց առաջխաղացման նպատակով ազգային մեխանիզմի (Ազգային մեխանիզմ) ստեղծման հանձնարարականը ներկայացված է 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումներում, որում, մասնավորապես, Հայաստանի Կառավարությանը խստորեն կոչ է արվում կանանց առաջխաղացման նպատակով ստեղծելու աշխատակիցներով ու ռեսուրսներով լրակազմված Ազգային մեխանիզմ, որը պետք է ապահովեր կանանց իրավունքների տեսակետի և գենդերային վերլուծության ներառումը բոլոր ընթացիկ քաղաքականությունների մշակման և ռազմավարական զարգացման պլանավորվող գործողություններում (մաս 61)⁵: Ի դեպ, նշենք, որ ըստ Կառավարության 1997 թվականի սկզբնական հաշվետվության⁶՝ Հայաստանում չկա կանանց իրավունքների պաշտպանության համար պատասխանատու հատուկ ինստիտուտ (մաս 11)⁷:

Կառավարությունն իր 2-րդ պարբերական հաշվետվությունում (1999 թ.) նշում է սոցիալական ապահովության նախարարության կազմում Կանանց և երեխաների հարցերով զբաղվող ստորաբաժանում ստեղծելու մասին: Բացի այդ, ըստ հաշվետվության, Ազգային ժողովում գործում է Հանրային առողջության և սոցիալական հարցերով մշտական հանձնաժողով, իսկ Կառավարության կազմում՝ Սոցիալական քաղաքականության վարչություն (մաս 18)⁸, ինչը Կոմիտեն բնորոշում է որպես դրական հանգամանք՝ Հայաստանին ողջունելով կանանց առաջխաղացման համար Ազգային մեխանիզմ հիմնադրելու կապակցությամբ⁹:

Արդեն 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումներով կրկին ողջունելով 2002 թվականին աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում համապատասխան վարչության ստեղծումը (Կանանց, ընտանիքի և երեխաների հարցերով)՝ Կոմիտեն ավստասանք է հայտնում Հայաստանում կանանց առաջխաղացման համար Ազգային մեխանիզմի համապատասխան կառույցի բացակայության կապակցությամբ¹⁰: Միաժամանակ, ընդհանուր

⁵ Տե՛ս 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումները (A/52/38/Rev.1), [Committee on the Elimination of Discrimination Against Women, Concluding Observations/Comments - Armenia \(umn.edu\)](#):

⁶ Սկզբնական պարբերական հաշվետվությունը ներկայացվել է 1996 թվականին, ապա վերանայվել 1997 թվականին՝ արտացոլելու 1995 թ. ՀՀ Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված փոփոխությունները:

⁷ Կառավարության 1997 թվականի սկզբնական հաշվետվության համար (վերանայված տարբերակ) տե՛ս [CEDAW/C/ARM/1/Corr.1 - CONSIDERATION OF REPORTS SUBMITTED BY STATES PARTIES UNDER ARTICLE 18 OF THE CONVENTION ON THE ELIMINATION OF ALL FORMS OF DISCRIMINATION AGAINST WOMEN; Armenia](#):

⁸ Կառավարության 2-րդ պարբերական հաշվետվության համար տե՛ս [Refworld | UN Committee on the Elimination of Discrimination against Women: State Party Report, Armenia](#):

⁹ Կոմիտեի 2002 թվականի Եզրափակիչ դիտարկումներ (A/57/38, paras. 25–69), մաս 39, [University of Minnesota Human Rights Library \(umn.edu\)](#):

¹⁰ Հատկանշական է, որ Կառավարությունն իր 2007 թվականի միավորված 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվությամբ նշված վարչությունը ներկայացնում է որպես կանանց սոցիալական պաշտպանության և գենդերային հավասարության հիմնական ազգային մեխանիզմ (մաս 37), [Refworld | Consideration of reports](#)

առմամբ ողջունելով 2004 թվականին Օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման հանգամանքը՝ Կոմիտեն մտահոգություն է հայտնում առ այն, որ Օմբուդսմենի գրասենյակը չունի գենդերային հավասարության հարցերով զբաղվող ստորաբաժանում (մաս 18)¹¹:

Իր նախորդ՝ 2002 թվականի Եզրափակիչ դիտարկումներում (A/57/38) տրված հանձնարարականին համահունչ՝ Կոմիտեն հիշեցնում է Կոնվենցիայի կիրարկման ընթացքում գենդերային հավասարության և կանանց կողմից իրենց իրավունքների իրացման համար Կառավարության հաշվետվողականությունը լիարժեք ապահովելու՝ պետության պարտականության մասին: Այս կապակցությամբ Կոմիտեն հղում է անում կանանց առաջխաղացման համար Ազգային մեխանիզմի վերաբերյալ իր թիվ 6 Ընդհանուր հանձնարարականում և Պեկինի Գործողությունների ծրագրում տրված ուղեցույցին՝ պետությանը կոչ անելով ընդունելու գենդերային հավասարության մասին օրենք, որով կստեղծվի Կոնվենցիայի կիրարկման համակարգման համար անհրաժեշտ կանանց առաջխաղացման Ազգային մեխանիզմ՝ լրակազմված անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսներով: Նաև պետությանը կոչ է արվում ընդունելու Ազգային ծրագիր՝ 2004-2010 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում կանանց կարգավիճակը բարելավելու և հասարակության մեջ նրանց դերը մեծացնելու, ինչպես նաև Կառավարության քաղաքականության բոլոր ոլորտներում գենդերային մեյնսթրիմինգի¹² արդյունավետ իրագործման նպատակով, ներառյալ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից նոր օրենսդրության սահմանադրականության ստուգման, ինչպես նաև բյուջետավորման գործընթացում: Վերջում Կոմիտեն պետությանը կոչ է անում Օմբուդսմենի գրասենյակի կազմում ստեղծելու գենդերային հավասարության ապահովման հարցերով զբաղվող հատուկ պաշտոն (մաս 19)¹³:

Թեպետ Կառավարությունն իր միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունում (2015 թ.)¹⁴ Ազգային մեխանիզմ ստեղծելու Կոմիտեի հանձնարարականին անդրադարձ կատարել է, սակայն, ըստ էության, որևէ տեղաշարժ արձանագրված չէ: Այսպես՝ միավորված հաշվետվությունում խոսվում է ՀՀ վարչապետին կից Կանանց հարցերով խորհրդի գործունեության մասին, որը, ինչպես և ենթադրվում է, խորհրդատվական բնույթի մարմին էր¹⁵:

[submitted by States parties under article 18 of the Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women : combined 3rd and 4th periodic reports of States parties : Armenia:](#)

¹¹ Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումների համար տե՛ս UN Committee on the Elimination of Discrimination Against Women (CEDAW), Concluding observations of the Committee on the Elimination of Discrimination against Women: Armenia, 28 January 2009, CEDAW/C/ARM/CO/4, available at: <https://www.refworld.org/docid/49c0c8292.html> [accessed 17 August 2022]:

¹² Համալիր մոտեցում գենդերային հավասարության խնդրին:

¹³ Տե՛ս Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում:

¹⁴ Կառավարության 2015 թվականի միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվության համար տե՛ս https://www.refworld.org/publisher.CEDAW.STATEPARTIESREP_ARM_56e7d3a64_0.html:

¹⁵ Խորհուրդը ստեղծվել էր ՀՀ վարչապետի 29.12.2000 թվականի թիվ 862 որոշմամբ՝ գործելով մինչև 20.11.2014 թ.: Դրան փոխարինելու եկավ Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհուրդը:

Անդրադառնալով Օմբուդսմենի գրասենյակին՝ հաշվետվության մեջ, մասնավորապես, նշվում է, որ գրասենյակում առկա է կանանց հարցերով Պաշտպանի օգնականի հաստիք (մաս 3)¹⁶:

Կոմիտեն, իր վերջին՝ 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներում անդրադառնալով Ազգային մեխանիզմի ստեղծման հիմնախնդրին, Հայաստանին կոչ է անում՝ (ա) իր հաջորդ պարբերական հաշվետվությունում ներառելու տեղեկատվություն Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհրդի, կից աշխատանքային խմբի և գենդերային հարցերով մարզային հանձնաժողովների իրավասության, ինչպես նաև դրանց գործունեության համակարգման վերաբերյալ, (բ) հզորացնել Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհրդի՝ գենդերային հավասարության վերաբերյալ համապատասխան քաղաքականություններն արդյունավետորեն մշտադիտարկելու և կիրարկելու, նույն իրավասություններով օժտված ինստիտուտների աշխատանքը համակարգելու, Կառավարության ամբողջ կառուցվածքում գենդերային հավասարության խնդրին համալիր մոտեցում ցուցաբերելու, ինչպես նաև խորհրդի՝ որպես կանանց առաջխաղացման Ազգային մեխանիզմ հանդես գալու կարողությունները, (գ) մեծացնել Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի և գենդերային հարցերով մարզային հանձնաժողովների մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները (մաս 13)¹⁷:

Նշում հանձնարարականի կատարման վերաբերյալ: Կանանց առաջխաղացման նպատակով Ազգային մեխանիզմ ստեղծելու Կոմիտեի հանձնարարականն ըստ էության կատարված չէ: Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ում 2000-2014 թվականների ընթացքում գործում էր ՀՀ վարչապետին կից Կանանց հարցերով խորհուրդը, որին 2015 թվականին փոխարինելու եկավ Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհուրդը¹⁸: Վերջինիս ստեղծումը պայմանավորված էր «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ (2013 թ.)¹⁹: Ըստ Կառավարության համապատասխան որոշման՝ Խորհուրդը **ստեղծվել էր որպես Ազգային մեխանիզմ**, որը պիտի համակարգեր հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովումը: Համաձայն Խորհրդի աշխատակարգի²⁰, Խորհուրդն ընդունում է խորհրդատվական բնույթի որոշումներ (կետ 6): Կանանց և տղամարդկանց

¹⁶ Տե՛ս Կառավարության 2015 թվականի միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, էջ 2:

¹⁷ 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումների համար տե՛ս UN Committee on the Elimination of Discrimination Against Women (CEDAW), Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Armenia, 18 November 2016, CEDAW/C/ARM/CO/5-6, available at: <https://www.refworld.org/docid/583863b34.html> [accessed 17 August 2022], էջ 4:

¹⁸ Խորհուրդը ստեղծվեց ՀՀ վարչապետի 2015 թվականի մարտի 9-ի թիվ 178-Ս որոշման հիման վրա:

¹⁹ Օրենքի ամբողջական տեքստի համար տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>:

²⁰ Հաստատված է ՀՀ վարչապետի 2015 թվականի հիշատակված որոշմամբ:

հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհուրդն իր գործունեությունը դադարեցրեց 2019 թվականին՝ փոխարինվելով ՀՀ-ում Կանանց հարցերով խորհրդով: Նշված երեք խորհուրդների իրավասությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ տարբեր անվանումներով հանդերձ նույնն են այդ մարմինների կարգավիճակը և լիազորությունների ծավալը. դրանք խորհրդակցական բնույթի մարմիններ են՝ օժտված առավելապես խորհրդատվական և համակարգող լիազորություններով: Այս մասին նաև նշվում է Կառավարության 2020 թվականի 7-րդ պարբերական հաշվետվության մեջ՝ ՀՀ-ում Կանանց հարցերով խորհուրդը ներկայացնելով որպես Ազգային մեխանիզմ: Հաշվետվությունում ընդգծվում է նաև Խորհրդի խառը բնույթը՝ կազմված պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: Մինչդեռ ակնհայտ է, որ Կոմիտեի՝ Ազգային մեխանիզմ ստեղծելու հանձնարարականի կատարման առումով կարևոր է ոչ միայն ինքնին Խորհրդի առկայությունը, այլև դրա իրավական կարգավիճակը, դրանով պայմանավորված՝ իրավասության ծավալը, ֆինանսական և մարդկային ռեսուրսների առկայությունը, այլ կերպ ասած՝ նման մարմնի, անկախ անվանումից, ինստիտուցիոնալ, գործառնական և կազմակերպչական անկախությունը: Իրավիճակն էլ ավելի է բարդանում, երբ տարբեր ժամանակներում գործած այդ խորհուրդների գործունեության անգամ հպանցիկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ մարմիններն առավելապես գործել են թղթի վրա²¹:

Հանձնարարականի չկատարման պատճառները և վերհանված օրինաչափությունները: Նախքան հանձնարարականի չկատարման պատճառներին անդրադառնալը կցանկանայինք ինստիտուցիոնալ առումով վերլուծության ենթարկել Կոմիտեի՝ Ազգային մեխանիզմ ստեղծելու հանձնարարականի կատարման նպատակով պետության ձեռնարկած ջանքերը, ինչը հնարավորություն կտա առավել լիարժեք գնահատելու Ազգային մեխանիզմ ստեղծելու հնարավոր ուղիները: Այսպես՝

- Ազգային մեխանիզմը սկզբնապես հիմնվել է որպես սոցիալական հարցերով լիազոր մարմնի ստորաբաժանում:

²¹ Բացի այդ՝ Կոմիտեի նշված հանձնարարականի կատարման առումով հարկ ենք համարում նշել, որ ՀՀ ՄԻՊ-ին առընթեր ներկայումս գործում է Կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհուրդ, որի անդրանիկ նիստը տեղի ունեցավ 2022 թվականի սեպտեմբերի 9-ին, ավելի մանրամասն տե՛ս [Տեղի ունեցավ ՀՀ ՄԻՊ-ին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի անդրանիկ նիստը](#), [Ombudsman](#): ՄԻՊ-ին առընթեր նման խորհուրդները «հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետ հարթակ են», որոնց նպատակն է «Պաշտպանին տրամադրել աջակցություն մարդու իրավունքների պահպանության, դրանց ապահովման վերաբերյալ խնդիրների վերհանման, քննարկման և իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացման հարցում»: Այս առումով նման խորհրդի առկայությունն էական չէ Ազգային մեխանիզմի ստեղծման՝ Կոմիտեի հանձնարարականի կատարման առումով: ՄԻՊ-ին առընթեր խորհուրդների մասին ավելի մանրամասն տե՛ս [Ombudsman](#):

- ՀՀ-ում 2004 թվականին Օմբուդսմենի ինստիտուտի ստեղծումից հետո Ազգային մեխանիզմը լրացվել է ևս մեկ տարրով՝ ի դեմս Օմբուդսմենի գրասենյակի համապատասխան աշխատակցի՝ կանանց հարցերով խորհրդակցանի²²:
- 2000 թվականից ՀՀ-ում ստեղծվել են կանանց հարցերով զբաղվող խորհրդակցական կարգավիճակ ունեցող մարմիններ՝ գործադրին կից գործող խորհուրդներ, որոնք 2015 թվականից անվանապես ներկայացվում են որպես Ազգային մեխանիզմ:
- Ազգային մեխանիզմ ներկայացվող այս մարմինները՝ խորհուրդները, օժտված չեն (չեն եղել) ինստիտուցիոնալ անկախության համապատասխան աստիճանով²³, ըստ այդմ՝ ֆինանսական, մարդկային և տեխնիկական համապատասխան ռեսուրսներով՝ բավարարելու Կոմիտեի կողմից Ազգային մեխանիզմին ներկայացվող նվազագույն պահանջները:
- Ավելին՝ այդ խորհուրդները, ինչպես ցույց է տալիս հատկապես վերջին՝ 2019 թվականին ստեղծված՝ ՀՀ-ում Կանանց հարցերով խորհրդի գործունեության ուսումնասիրությունը, փաստացի չեն գործում²⁴, ինչով պայմանավորված լիարժեք չեն գործում նաև Խորհրդին կից աշխատանքային խմբերը:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք փաստել, որ Կոմիտեի ներկայացրած հանձնարարականի իրացման իմաստով Ազգային մեխանիզմ, ըստ էության, չի ստեղծվել: Գործադիր իշխանության մարմինների առանձին ստորաբաժանումների և Օմբուդսմենի գրասենյակի առանձին ներկայացուցչի կամ հասարակական խորհրդի, ապա՝ խորհրդակցական բնույթի որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող և փաստացի չգործող խորհուրդները, ըստ էության, չեն բավարարում Կոմիտեի պահանջները:

Այժմ անդրադառնանք հանձնարարականի չկատարման պահանջներին, որը, մեր խորին համոզմամբ, կրկին պետք է դիտարկել ինստիտուցիոնալ հարթության վրա, մասնավորապես՝ ՀՀ-ում հանրային իշխանության մարմինների կազմի, դրանց իրավական կարգավիճակի և իրավասությունների ծավալի վերլուծության համատեքստում: Ըստ այդմ՝ Ազգային մեխանիզմի ստեղծման երեք հիմնական մոդելներ կարելի է առաջ քաշել.

²² Բացի այդ՝ ներկայումս ՀՀ ՄԻՊ-ին առնթր գործում է Կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհուրդ, որի անդրանիկ նիստը տեղի ունեցավ 2022 թվականի սեպտեմբերի 9-ին, ավելի մանրամասն տե՛ս [Տեղի ունեցավ ՀՀ ՄԻՊ-ին առնթր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի անդրանիկ նիստը](#), Ombudsman: ՄԻՊ-ին առնթր նման խորհուրդները «հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետ հարթակ են», որոնց նպատակն է «Պաշտպանին տրամադրել աջակցություն մարդու իրավունքների պահպանության, դրանց ապահովման վերաբերյալ խնդիրների վերհանման, քննարկման և իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացման հարցում»: Այս առումով նման խորհրդի առկայությունն էական չէ Ազգային մեխանիզմի ստեղծման Կոմիտեի հանձնարարականի կատարման առումով: ՄԻՊ-ին առնթր խորհուրդների մասին ավելի մանրամասն տե՛ս [Ombudsman](#):

²³ Ինստիտուցիոնալ անկախությունը, մեր համոզմամբ, անհրաժեշտ է Կոմիտեի՝ ուղղակիորեն ներկայացրած «մարդկային և ֆինանսական ռեսուրսներով լրակազմված» Ազգային մեխանիզմ ունենալու պահանջի լիարժեք կատարման համար:

²⁴ Կառավարության համապատասխան որոշմամբ նախատեսված է, որ Խորհրդը պետք է տարեկան առնվազն երկու անգամ նիստ հրավիրի:

- Ազգային մեխանիզմի ստեղծումը գործադրի կազմում՝ գործադրին կից: Մա այն մոդելն է, որը մինչ այժմ գործել է, սակայն, ըստ էության, չի բավարարել Կոմիտեի՝ Ազգային մեխանիզմին ներկայացվող նվազագույն պահանջները: Մոդելը կատարելագործելու նպատակով, օրինակ, ներկայացուցչական կազմ²⁵ ունեցող Խորհրդի փոխարեն կարելի է գործադրի կազմում ստեղծել առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով օժտված մարմին, որը, օրինակ, այդ մարմինն կօժտի որոշակի ֆինանսական անկախությամբ՝ երաշխավորելով համապատասխան ֆինանսական, տեխնիկական և մարդկային ռեսուրսների առկայությունը: Այնուամենայնիվ, գործադրի (լիազոր մարմնի) կազմում ստեղծված լինելու փաստի ուժով այդ մարմինն ակնհայտորեն չի կարող ունենալ բավարար ինստիտուցիոնալ և գործառնական անկախություն՝ որպես Ազգային մեխանիզմ լիարժեք գործելու առումով²⁶: Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ, որ գործադրի կազմում առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումները ստեղծվում են հենց գործադրի խնդիրների ու նպատակների կյանքի կոչման նպատակով, ինչն, իր հերթին, մեծ հաշվով համատեղելի չէ Ազգային մեխանիզմի բուն նպատակի և առաքելության հետ: Այսինքն՝ գործադրի (գործադիր իշխանության) առաքելության, խնդիրների ու նպատակների վերացարկման պարագայում անգամ հնարավոր չէ Ազգային մեխանիզմի գործունեությունը տեսնել գործադրի կազմում:
- Երկրորդ մոդելը ՄԻՊ-ին նաև կանանց առաջխաղացման հարցերով Ազգային մեխանիզմի կարգավիճակ շնորհելն է, ինչպես, օրինակ՝ արվել է Խոշտանգումների ազգային մեխանիզմի պարագայում: Այս մոդելն ունի մի շարք առավելություններ՝ ինստիտուցիոնալ, գործառնական, կազմակերպչական, ֆինանսական անկախությունը և այլն: Նման լուծում է առաջարկվում «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ իրավահավասարության ապահովման Ազգային մեխանիզմի մասով, որին մանրամասն անդրադարձել ենք սույն հետազոտության Բաժին 6-ում: Այս լուծման պարագայում իրավահավասարության ապահովման Ազգային մեխանիզմը՝ ի դեմս ՄԻՊ-ի կամ կից խորհրդի, կարող է համատեղել նաև կանանց առաջխաղացման Ազգային մեխանիզմի գործառնությունները: Այս մոդելի հնարավոր թերություններից կարելի է նշել, օրինակ, հանձնիս ՄԻՊ-ի, մեծ թվով լիազորությունների կենտրոնացումը՝ դրանից բխող հետևանքներով:
- Մեր կողմից դիտարկվող երրորդ մոդելը իրավահավասարության, այդ թվում՝ կանանց առաջխաղացման հարցերով Ազգային մեխանիզմի՝ որպես սահմանադրական կարգավիճակ ունեցող ինստիտուտի ստեղծումն է: Նման իրավակարգավորումն աննախադեպ է հայաստանյան սահմանադրաիրավական պրակտիկայում, կենթադրի

²⁵ Հանրային իշխանության իրավասու տարբեր մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված լինելը:

²⁶ Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ, որ գործադրի կազմում առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումները ստեղծվում են հենց գործադրի խնդիրների ու նպատակների կյանքի կոչման նպատակով, ինչն, իր հերթին, մեծ հաշվով համատեղելի չէ Ազգային մեխանիզմի բուն նպատակի ու առաքելության հետ:

սահմանադրական փոփոխություններ, սակայն միանգամայն հնարավոր լուծում է համապատասխան քաղաքական կամքի առկայության պարագայում:

Առաջնահերթություն: Կանանց առաջխաղացման հարցերով Ազգային մեխանիզմի ստեղծումը, մեր գնահատմամբ, առաջնահերթություն է՝ հատկապես նկատի ունենալով «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունման հնարավորությունը և դրա հիման վրա իրավահավասարության ապահովման Ազգային մեխանիզմի ստեղծումը ՄԻՊ-ին կից կամ առանձին, որում, հնարավոր է նաև կանանց առաջխաղացման հարցերով Ազգային մեխանիզմի համատեղումը:

ԲԱԺԻՆ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ

Նախքան բուն հետազոտությանն անդրադառնալը ցանկանում ենք նշել, որ սույն բաժնի շրջանակում միաժամանակ անդրադարձ կարվի Կոնվենցիայի երեք տարբեր հոդվածներով ամրագրված պահանջների կատարման ուղղությամբ Կոմիտեի ներկայացրած հանձնարարականներին՝ նկատի ունենալով այդ պահանջների միջև առկա օրգանական կապը: Դրանք են՝ բոլոր համապատասխան միջոցներով և առանց հապաղելու կանանց նկատմամբ խտրականության վերացման քաղաքականություն վարելու պահանջը (հոդված 2), ժամանակավոր հատուկ միջոցներ ընդունելու վերաբերյալ պահանջը (հոդված 4) և երկրի քաղաքական ու հասարակական կյանքում կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու պահանջը (հոդված 7)²⁷:

Կանանց քաղաքական մասնակցության խթանումը Կոմիտեի՝ 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումներով Հայաստանին ներկայացված հերթական հանձնարարականն է, որով Հայաստանին առաջարկվում է կիրառել ժամանակավոր հատուկ միջոցներ անկախացումից ի վեր կանանց քաղաքական ներկայացվածության էական նվազման խնդրի լուծման և հանրային կյանքի բոլոր ոլորտներում նրանց մասնակցության մեծացման նպատակով (մաս 63)²⁸: «Ժամանակավոր հատուկ միջոցներ» հասկացությունն ամրագրված է Կոնվենցիայի 4-րդ հոդվածով, որի կիրառման նպատակը տղամարդկանց և կանանց միջև փաստացի (դե ֆակտո) հավասարության հաստատման արագացումն է: Կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից նման միջոցների կիրառումը Կոնվենցիայի իմաստով խտրականություն չի համարվում, դրանք ենթակա են վերացման հնարավորությունների ու վերաբերմունքի հավասարության նպատակին հասնելուն պես²⁹:

Կառավարության 1997 թվականի պարբերական հաշվետվությամբ (վերանայված տարբերակ) ներկայացված տվյալների համաձայն՝ 1997 թվականի դրությամբ ՀՀ Ազգային ժողովում կին խորհրդարանականների թիվը եղել է 12՝ զգալիորեն զիջելով Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի կին անդամների թվին (մաս 29): Ընդհանուր առմամբ հանրային կյանքին կանանց մասնակցության առումով, ըստ Կառավարության տվյալների, երկրում գործած կանանց

²⁷ Տե՛ս Կոնվենցիան (հայերեն), նույն տեղում:

²⁸ Տե՛ս 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 63:

²⁹ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Մասնակից պետությունների կողմից տղամարդկանց և կանանց միջև փաստական հավասարության հաստատումն արագացնելուն նպատակաուղղված ժամանակավոր հատուկ միջոցների ընդունումը չի համարվում խտրականություն, ինչպես սահմանված է սույն Կոնվենցիայով, սակայն դա ոչ մի դեպքում չպետք է հանգեցնի անհավասար կամ տարբերակված ստանդարտների պահպանման. այդ միջոցները կվերացվեն, երբ հնարավորությունների և վերաբերմունքի հավասարության նպատակներն իրականություն կդառնան: Մասնակից պետությունների կողմից մայրության պաշտպանությանը նպատակաուղղված հատուկ, ներառյալ սույն Կոնվենցիայով նախատեսված միջոցների ընդունումը չի համարվում խտրական: Տե՛ս Կոնվենցիան, նույն տեղում: Ժամանակավոր հատուկ միջոցների բնույթն ու նշանակությունը պարզաբանված են Կոմիտեի թիվ 25 ընդհանուր հանձնարարականում, [General recommendation No \(un.org\)](http://www.un.org):

կազմակերպությունների թիվը հաշվետվության ներկայացման դրությամբ գերազանցել է 30-ը, որոնք զբաղվել են կանանց քաղաքական, սոցիալական և մշակութային իրավունքների առաջխաղացմամբ: Այդ կազմակերպությունների շարքում կան նաև միջազգայինները, որոնցում ներգրավված են հայկական Սփյուռքի ներկայացուցիչներ (մաս 28)³⁰:

Ի կատարումն Կոմիտեի վերը նշված հանձնարարականի՝ Հայաստանն իր 2-րդ պարբերական հաշվետվությունում (1999 թ.) տարբեր վիճակագրական տվյալներ է ներկայացնում քաղաքականության և հանրային կյանքի այլ բնագավառներում կանանց մասնակցության վերաբերյալ (մասեր 40-45), սակայն ժամանակավոր հատուկ միջոցների կիրառման, օրինակ՝ ընտրական օրենսդրությամբ կանանց համար հատուկ քվոտաներ (գենդերային քվոտաներ) սահմանելու վերաբերյալ որևէ նշում առկա չէ³¹: Կառավարության 2-րդ պարբերական հաշվետվության ներկայացման ժամանակ արդեն ՀՀ Ազգային ժողովի 131 պատգամավորներից միայն 4-ն էին կին՝ կազմելով պատգամավորների ընդհանուր թվի միայն 5,24 տոկոսը³²:

Կառավարությունն իր միավորված 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվությունում (2007 թ.) քննարկվող խնդրի կապակցությամբ հղում է անում Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագրին³³, որը, Կառավարության գնահատմամբ, «կարող է դիտարկվել որպես հիմնական ժամանակավոր հատուկ միջոց»՝ ուղղված տղամարդկանց և կանանց միջև փաստացի (դե ֆակտո) հավասարության հաստատման արագացմանը (մաս 53)³⁴: Հատկանշական է, որ Ծրագրով իրապես նախատեսվում էր գենդերային քվոտաների ներդրմանն ուղղված միջոցառում՝ երկրի քաղաքական ու հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունն ապահովելու նպատակով: Թեպետ հարկ է նշել, որ հիշատակված Ծրագրի ընդունումն ինքնին ժամանակավոր հատուկ միջոցի կիրառում չի կարող համարվել (ի տարբերություն գենդերային քվոտաների ներդրման), ինչին անդրադառնում է նաև Կոմիտեն՝

³⁰ Տե՛ս Կոմիտեի 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում:

³¹ Պարբերական հաշվետվությունում, ի թիվս այլնի, հղում է արվում ՀՀ Սահմանադրությամբ բոլորի համար հավասար ընտրական իրավունքի (ընտրելու և ընտրվելու) երաշխավորված լինելու հանգամանքին: ՀՀ Սահմանադրության (1995 թ.) 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ զաղտնի քվեարկությամբ: Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (1995 թ.), հոդված 3, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1>:

³² Ըստ պարբերական հաշվետվության՝ կանանց համամասնությունն ավելի մեծ է իշխանության գործադիր ու դատական մարմիններում: Այդուհանդերձ, ի տարբերություն 1996-1997 թթ. մեկ կին նախարարի, 1999 թ. դրությամբ ՀՀ Կառավարությունում կին նախարար այլևս չկա: Թեպետ, ինչպես նշված է պարբերական հաշվետվությունում, կանայք լայնորեն ներգրավված են պետական իշխանության միջին օղակներում: Ավելի մանրամասն տե՛ս Կառավարության 2-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մասեր 40-45:

³³ Ծրագիրը և դրա միջոցառումների ժամանակացույցը հաստատվել են ՀՀ Կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի թիվ 645-Ն որոշմամբ, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=38293>:

³⁴ Տե՛ս միավորված 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 53:

մատնանշելով պետության կողմից «Ժամանակավոր հատուկ միջոցներ» հասկացության ակնհայտ չհասկացված լինելը³⁵:

Քաղաքական և հանրային կյանքում կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու Կոնվենցիայի պահանջի³⁶ իրացման առումով կարևոր է ՀՀ ընտրական օրենսգրքով համամասնական ընտրական ցուցակներում կանանց համար 15 տոկոս քվոտայի սահմանումը նախկին 5 տոկոսի փոխարեն, որին Կառավարությունն անդրադառնում է իր միավորված 3-րդ և 4-րդ հաշվետվության մաս 109-ում: Բացի այդ՝ 2005 թվականին կատարված փոփոխություններով³⁷ նախատեսվում էր, որ ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին³⁸:

Կոմիտեն իր 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումներում՝ «Ժամանակավոր հատուկ միջոցներ» վերտառությամբ հանձնարարականի մասում, ողջունելով ՀՀ ընտրական օրենսգրքի՝ գենդերային ավելի մեծ քվոտա սահմանող փոփոխությունները, այդուհանդերձ, մտահոգություն է հայտնում առ այն, որ փոփոխություններով սահմանված քվոտան անարդյունավետ է: Կոմիտեն մտահոգություն է հայտնում նաև առ այն, որ ՀՀ ընտրական օրենսգրքով նշված քվոտաները սահմանելուց զատ Կառավարությունը, որպես ընդհանուր քաղաքականության մաս, որևէ այլ ժամանակավոր հատուկ միջոց չի կիրառել՝ արագացնելու կանանց և տղամարդկանց միջև փաստացի (դե ֆակտո) հավասարության հաստատումը Կոնվենցիայի առարկա հանդիսացող բոլոր ոլորտներում կամ բարելավելու կանանց իրավունքների վիճակը հատկապես աշխատավայրում և քաղաքականության մեջ կանանց մասնակցության նկատառումով³⁹: Ըստ այդմ՝ Կոմիտեն կոչ է անում արագացնելու ընտրական օրենսգրքի փոփոխությունները՝ մեծացնելու արդեն իսկ կիրառված 15 տոկոս քվոտան՝ սահմանելով Կոմիտեի կողմից առաջարկվող 20 տոկոսից ավելի մեծ գենդերային քվոտա (մաս 17)⁴⁰:

Կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջների կատարման կապակցությամբ՝ երկրի քաղաքական և հասարակական կյանքում կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու վերաբերյալ⁴¹, Կառավարությունն իր միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունում (2015 թ.) հղում է անում այդ ժամանակվա նոր ընտրական օրենսգրքին, որով նախատեսվում էր առնվազն 20

³⁵ Տե՛ս Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 16:

³⁶ Ամրագրված է Կոնվենցիայի 7-րդ հոդվածով: Տե՛ս Կոնվենցիան (հայերեն), նույն տեղում:

³⁷ Տե՛ս 19.05.2005 թվականի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-101-Ն օրենքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=1789>:

³⁸ Այսպես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի (1999 թ.) 100-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ներկայացրած ընտրական ցուցակում առնվազն 15 տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում՝ ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին: Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգրք (1999 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67563>:

³⁹ Ավելի մանրամասն տե՛ս Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 16:

⁴⁰ Նույն տեղում, մաս 17:

⁴¹ Տե՛ս Կոնվենցիայի 7-րդ հոդվածը, նույն տեղում:

տոկոս գենդերային քվոտա⁴²: Այսպես՝ 2011 թվականի մայիսի 26-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի⁴³ 108-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «...Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը»⁴⁴: Ներդրված գենդերային քվոտայի արդյունքում 2012 թվականի մայիսի 6-ի խորհրդարանական ընտրություններով ձևավորված 5-րդ գումարման Ազգային ժողովում կին պատգամավորների թիվն աճեց՝ հասնելով 14-ի⁴⁵: Ի դեպ, զեկուցվող ժամանակահատվածում կին նախարարները երկուսն էին՝ ՀՀ սփյուռքի և մշակույթի նախարարները⁴⁶: Խոսելով հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց ներկայացվածության խթանման մասին՝ Կառավարությունը բավականին մանրամասն անդրադարձ է կատարում կրոնական, հասարակական և քաղաքական կազմակերպությունների՝ կուսակցությունների վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումներին⁴⁷: Այդ կազմակերպությունների գրանցման ու գործունեության՝ այդ ժամանակվա համար հարաբերականորեն ազատական իրավակարգավորումները, մեր գնահատմամբ, դեռևս բավարար հիմք չեն Կոնվենցիայի՝ հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց ներկայացվածության խթանման պահանջի լիարժեք կատարման առումով:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածով ամրագրված՝ ժամանակավոր հատուկ միջոցների կիրառման առնչությամբ Կառավարությունը կրկին շեշտում է ՀՀ օրենսդրությամբ սեռով պայմանավորված որևէ խտրականության բացառման հանգամանքը, իսկ ինչ վերաբերում է փաստացի (դե ֆակտո) հավասարությանը, ապա, ըստ Կառավարության, այդ նպատակի իրագործումը լուրջ ջանքեր կպահանջի թե՛ պետական իշխանությունից և թե՛ քաղաքացիական հասարակությունից⁴⁸: Այս կապակցությամբ Կառավարությունը, ի թիվս այլնի, անդրադառնում է «Կանանց և տղամարդկանց

⁴² Տե՛ս միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 58:

⁴³ Օրենսգրքի ամբողջական տեքստի համար տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք (2011 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=101641>:

⁴⁴ Նույն պահանջն էր նախատեսված նաև Երևանի ավագանու անդամ թեկնածուի առաջադրման և գրանցման իրավահարաբերությունները կարգավորող 34-րդ գլխում: Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրքը (2011 թ.), նույն տեղում:

⁴⁵ 5-րդ գումարման Ազգային ժողովի կազմի համար տե՛ս [National Assembly of the Republic of Armenia | Official Web Site | parliament.am](http://www.parliament.am):

⁴⁶ Ավելի մանրամասն տե՛ս միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 59:

⁴⁷ Հետխորհրդային Հայաստանում հասարակական կազմակերպությունների մասին երեք օրենք է ընդունվել նույն վերտառությամբ՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 1996 թ., տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=337>, 2001 թ., տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=1013>, և 2016 թ., տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161509>:

Քաղաքական կազմակերպությունների՝ կուսակցությունների գործունեությունը ներկայումս կարգավորվում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական ՀՀ օրենքով, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166242>: «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համար տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67169>:

⁴⁸ Տե՛ս միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 43:

հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքին (2013 թ.), որի նպատակն է «հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավորման աջակցումը և հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը»⁴⁹,⁵⁰:

Գենդերային քվոտայի մեծացման կապակցությամբ հարկ է նշել, որ 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքով (սահմանադրական օրենք)⁵¹ սահմանվեց առնվազն 30 տոկոս գենդերային քվոտա⁵²: Այսպես՝ ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի առաջին մասում առաջին համարից սկսած ցանկացած ամբողջ թվով եռյակում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը⁵³: Կառավարությունը գենդերային քվոտան առնվազն 30 տոկոս մեծացնելուն անդրադարձնում է իր միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունում՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջների կատարման համատեքստում⁵⁴: Կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված՝ բոլոր համապատասխան միջոցներով և առանց հապաղելու կանանց նկատմամբ խտրականության վերացման քաղաքականություն վարելու պարտականության կատարման կապակցությամբ Կառավարությունը, ի թիվս այլնի, անդրադարձնում է նախկին դատական օրենսգրքով դատավորների թեկնածությունների ցուցակը կազմելիս և հաստատելիս սեռային (գենդերային) հավասարակշռությունը հաշվի առնելու պահանջին, որի համաձայն. «Ցուցակը կազմելու ընթացքում հաշվի է առնվում սեռային (գենդերային) հավասարակշռությունը: Եթե որևէ սեռի դատավորների թիվը պակասի դատավորների ընդհանուր թվի քսանհինգ տոկոսից, ապա այդ սեռի թեկնածուներին ցուցակում կերաշխավորվի առնվազն հինգ տեղ»⁵⁵: Հատկանշական է, որ 2011-2013 թվականների ընթացքում կին դատավորների թիվը մոտավորապես կազմել է

⁴⁹ Օրենքի ամբողջական տեքստի համար տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138982>:

⁵⁰ Տե՛ս միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 43:

⁵¹ ՀՀ ընտրական օրենսգրքը (սահմանադրական օրենք)՝ ՀՕ-54-Ն, ընդունվել է 2016 թվականի մայիսի 25-ին: Ընտրական օրենսգրքի ամբողջական տեքստի համար տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166249>:

⁵² Հարկ է նկատի ունենալ, որ համաձայն ՀՀ ընտրականի օրենսգրքի անցումային դրույթների՝ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը սահմանված էր 25 տոկոս գենդերային քվոտա (հոդված 144, մաս 14): Այսինքն՝ 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների ադյունքում կազմավորված Ազգային ժողովն արդեն իսկ կազմավորվել է ավելի բարձր՝ առնվազն 30 տոկոս գենդերային քվոտայով: Ազգային ժողովի կազմի համար՝ ըստ պատգամավորների, տե՛ս ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքը, նույն տեղում:

⁵³ Նույն գենդերային քվոտան է սահմանված նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ. համայնքի ավագանու ընտրությունները համամասնական ընտրակարգով անցկացվում են 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում: Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգրքը (սահմանադրական օրենք), նույն տեղում, հոդված 130:

⁵⁴ Տե՛ս միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 58:

⁵⁵ Տե՛ս նախկին դատական օրենսգրքը (2007 թ.), հոդված 117, մաս 3 (ուժը կորցրել է 09.04.2018 թ.):

դատավորների ընդհանուր թվի 21 տոկոսը⁵⁶: Այս առումով վերը նշված առնվազն 25 տոկոս գենդերային քվոտան առաջընթաց կարելի է համարել:

Առաջ անցնելով՝ նշենք, որ ներկայիս դատական օրենսգրքով (2018 թ.) նախատեսված է գենդերային էլ ավելի բարձր քվոտա կիրառելու հնարավորություն: Այսպես՝ օրենսգրքի 109-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե որևէ սեռի դատավորների թիվը պակաս է դատավորների ընդհանուր թվի 25 տոկոսից, ապա դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում երաշխավորվում է առավելագույն, սակայն ոչ պակաս, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած այդ սեռի ներկայացուցիչների համար մինչև 50 տոկոս տեղ»⁵⁷: Նշված օրենսդրական կարգավորումը պետք է գնահատել որպես Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջների կատարմանն ուղղված առաջընթաց քայլ:

Կոմիտեն, իր 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներում ողջունելով ընտրական օրենսգրքի՝ ավելի մեծ գենդերային քվոտա սահմանող փոփոխությունները, այդուհանդերձ, մտահոգություն է հայտնում որոշումների ընդունման ամենաբարձր մակարդակներում՝ Ազգային ժողով, Կառավարություն, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ, դատական իշխանություն, դիվանագիտական ծառայություն և այլն, կանանց մասնակցության կայուն ցածր աստիճանի առնչությամբ: Բացի այդ՝ Կոմիտեն մատնանշում է քաղաքական և հանրային կյանքում կանանց մասնակցության կարևորության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման արշավների, ինչպես նաև նման արշավներում կանանց ներգրավման բացակայության փաստը⁵⁸: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կոմիտեն Հայաստանին հանձնարարում է՝

- ձեռնարկել միջոցառումներ, այդ թվում՝ ժամանակավոր հատուկ միջոցներ՝ արագացնելու կանանց լիակատար և հավասար մասնակցությունն ընտրովի և նշանակովի մարմիններում՝ Ազգային ժողով, նախարարական պաշտոններ, դատական համակարգ և դիվանագիտական աշխատանք,
- ներդնել գենդերային հավասարության համակարգ հանրային և մասնավոր ոլորտների բարձր պաշտոններում կանանց նշանակման և արագացված հավաքագրման համար,
- մեծացնել վերապատրաստումների և կարողությունների զարգացման ծրագրերի առկայությունը հանրային պաշտոն զբաղեցնել ցանկացող կանանց համար և շարունակել խրախուսել մեդիային՝ երաշխավորելու, որ կին և տղամարդ թեկնածուները և ընտրված ներկայացուցիչները մեդիայում ստանում են հավասար տեսանելիություն, հատկապես ընտրությունների ժամանակահատվածում,

⁵⁶ Տե՛ս միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 13, վերջին պարբերություն:

⁵⁷ ՀՀ դատական օրենսգրք (սահմանադրական օրենք), 2018 թ.,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167184>:

⁵⁸ Տե՛ս Կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 20:

- ապահովել քաղաքական կյանքում կանանց անվտանգությունը՝ Կոմիտեի նախորդ հանձնարարականներին համապատասխան (CEDAW/C/ARM/CO/4, para 29)⁵⁹:

Մույն բաժնում նշված հանձնարարականների կատարման կապակցությամբ Կառավարության 7-րդ պարբերական հաշվետվության⁶⁰ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ մասնակի լուծումներով հանդերձ⁶¹՝ զեկուցվող ժամանակահատվածում գենդերային քվոտայի մեծացումից զատ Կառավարությունը մեծ ջանքեր չի գործադրել Կոմիտեի մյուս հանձնարարականները կատարելու ուղղությամբ: Ընտրական օրենսգրքով սահմանված գենդերային քվոտայի մեծացմանը զուգահեռ հատկանշական է, օրինակ, «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում 2020 թվականին կատարված փոփոխություններով կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում սեռերի հավասարակշռությունն ապահովելու նպատակով ներդրված մեխանիզմը, որով կուսակցությունների պետական ֆինանսավորման չափն ուղղակիորեն պայմանավորված է այդ մարմնում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թվով⁶²:

Նշում հանձնարարականի կատարման վերաբերյալ: Հանձնարարականի պահանջները կատարվել են մասամբ: ՀՀ օրենսդրությամբ հիմնականում իրավահավասար և ոչ խտրական իրավակարգավորումներ նախատեսված լինելուն զուգահեռ⁶³ ՀՀ իշխանությունները հանձնարարականի պահանջների կատարումը հիմնականում սահմանափակել են քաղաքական և հանրային կյանքի առանձին ոլորտներում գենդերային քվոտաներ սահմանելով (սահմանվածները մեծացնելով): Հատկանշական է հատկապես ՀՀ ընտրական օրենսդրությամբ գենդերային քվոտայի աստիճանական մեծացման փաստը. 2005 թվականից սկսած ՀՀ ընտրական օրենսդրության փոփոխությունների արդյունքում մինչ այդ եղած 5 տոկոս գենդերային քվոտան մեծացվել է՝ 2016-ին այն հասցնելով առնվազն 30 տոկոսի: Ավելին՝ ներկայումս ներդրված առնվազն 30 տոկոս գենդերային քվոտան կիրառվում է ոչ միայն համապետական՝ ՀՀ Ազգային ժողովի, այլև տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ, ինչը կարևոր է տեղական մակարդակում քաղաքական կյանքում կանանց մասնակցությունը խթանելու առումով: Այդուհանդերձ, պետք է ընդգծել այն հանգամանքը, որ գենդերային քվոտայի զուտ սահմանումը դեռևս բավարար չէ քաղաքական և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով. դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է հանձնարարականների բոլոր պահանջների միաժամանակ կատարումը:

⁵⁹ Տե՛ս Կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 21:

⁶⁰ Տե՛ս Կառավարության 7-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մասեր 84-99:

⁶¹ Այդ մասնակի լուծումների համար տե՛ս Կառավարության 7-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մասեր 95-97:

⁶² Փոփոխություններն ուժի մեջ են մտել 2022 թվականի հունվարի 1-ից, ավելի մանրամասն տե՛ս «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, հոդված 26, մաս 7, նույն տեղում:

⁶³ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով ներկայացված պահանջ:

Հանձնարարականի պահանջների մասամբ կատարման պատճառները և վերհանված

օրինաչափությունները: Հանձնարարականի պահանջների մասամբ կատարումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, առաջին հերթին՝ «Ժամանակավոր հատուկ միջոցներ» հասկացության սահմանափակ մեկնաբանումն ու կիրառումը՝ այն սահմանափակելով նախ ընտրական օրենսդրությամբ, ապա՝ առանձին ոլորտներ կարգավորող նորմատիվ իրավական ակտերով (օրինակ՝ ՀՀ դատական օրենսգիրք) գենդերային քվոտաներ սահմանելով: 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումների մաս 21-ում նախատեսված հանձնարարականների պահանջների չկատարումը, մեր գնահատմամբ, սերտորեն պայմանավորված է հասարակության մեջ կանանց դերի հասարակական ընկալմամբ, գոյություն ունեցող կարծրատիպներով ու կանանց անբարենպաստ տնտեսական դրությամբ: Սրանից էլ կարող ենք հետևություն անել, որ քաղաքական և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց ներկայացվածության խթանումը հնարավոր է միայն կանանց առաջխաղացման հիմնախնդրին համալիր լուծումներ տալու պարագայում, որի հիմքում էլ, մեծ հաշվով, ընկած է մարդու իրավունքների համընդհանրության և անքակտելիության գաղափարը:

Առաջնահերթություն: Քաղաքական և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց լիարժեք ու հավասար մասնակցությունն ապահովելու նպատակով, մեր գնահատմամբ, անհրաժեշտ է շեշտադրել հատկապես կարծրատիպների հաղթահարմանն ու կանանց տնտեսական հզորացմանն ուղղված հանձնարարականների լիարժեք կատարումը:

ԲԱԺԻՆ 3. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Կոմիտեի՝ Կառավարությանը տրված հաջորդ հանձնարարականը վերաբերում է կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրին: Այսպես՝ 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն Կառավարությանը հանձնարարում է պատշաճ ուշադրություն դարձնել կանանց նկատմամբ բռնության խնդրին՝ խրախուսելով հանրային քննարկումը դրա տարբեր ձևերի վերաբերյալ, նախաձեռնել համապատասխան օրենսդրության ընդունումը, վերապատրաստել իրավապահ մարմինների աշխատակիցներին, դատավորներին և առողջապահության համակարգի մասնագետներին, այդ թվում՝ բավարար թվով կին մասնագետներին, ինչպես նաև սահմանել, կառավարել և վերացնել կանանց նկատմամբ բռնության բոլոր դրսևորումները՝ երաշխավորելով, որ բռնության գոհերի համար անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական և առողջապահական ծառայությունները հասանելի են՝ հատուկ ուշադրություն դարձնելով ներքին տեղահանված և փախստական կանանց (մաս 64)⁶⁴:

Հատկանշական է, որ Կառավարությունն իր 1997 թվականի սկզբնական պարբերական հաշվետվությունում (վերանայված տարբերակ) ըստ էության չի անդրադառնում կանանց նկատմամբ բռնության խնդրին, ինչի կապակցությամբ Կոմիտեն լուրջ մտահոգություն է հայտնում առ այն, որ Հայաստանի Կառավարությունը ձախողել է կանանց նկատմամբ բռնության խնդրի ճանաչումը և դրան լուծում տալը⁶⁵: Փոխարենը Կառավարությունը վկայակոչում է առանձին քրեաիրավական կարգավորումները՝ ուղղված, ի թիվս այլնի, կանանց սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության պաշտպանությանը⁶⁶:

Նույնն է Կառավարության մոտեցումը նաև 2-րդ պարբերական հաշվետվությունում (1999 թ.)⁶⁷: Կառավարությունը, սակայն, ընդունում է, որ կանայք, այդուհանդերձ, հաճախ են ենթարկվում բռնության, սակայն միշտ չէ, որ դիմում են իրավապահ մարմիններին, դիմելու դեպքում էլ նախընտրում են իրենց գործը քննարկել կին աշխատակցի հետ⁶⁸: Կանանց նկատմամբ բռնությանը վերջ դնելու նպատակով, ըստ քննարկվող պարբերական հաշվետվության, Կառավարությունը, ի թիվս այլնի, քայլեր է ձեռնարկում օրենսդրությունը կատարելագործելու ուղղությամբ՝ առանց մանրամասնելու, թե ինչ օրենսդրության մասին է խոսքը, կամ ինչ ուղղություններով է նախատեսվում օրենսդրության կատարելագործումը: Նշվում է նաև, որ միջոցներ են ձեռնարկվում բռնության գոհերի համար հատուկ սոցիալական ապահովության ծառայություններ նախատեսելու ուղղությամբ, ինչպես նաև աշխատանքներ են տարվում

⁶⁴ Տե՛ս Կոմիտեի 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումներ, մաս 64: Նշվածից բացի՝ Կոմիտեն Կառավարությունից պահանջում է հաջորդ պարբերական հաշվետվությունում, ի թիվս այլնի, ներառել տեղեկատվություն Կոմիտեի Ընդհանուր հանձնարարականների, մասնավորապես՝ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ թիվ 19 Ընդհանուր հանձնարարականի կատարման վերաբերյալ (Մաս 68):

⁶⁵ Տե՛ս Կոմիտեի 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 55, էջ 80:

⁶⁶ Տե՛ս Կառավարության սկզբնական պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մասեր 8 և 20:

⁶⁷ Տե՛ս Կառավարության 2-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մասեր 12, 13, էջ 5:

⁶⁸ Նույն տեղում, մաս 13, էջ 5:

ճգնաժամային պայմաններում գտնվող կանանց հոգեբանական աջակցություն տրամադրող կենտրոն ստեղծելու ուղղությամբ: Պարբերական հաշվետվությունում խոսվում է նաև բռնության ենթարկված կանանց սոցիալական ռեաբիլիտացիայի ամբողջական ծրագրերի մշակման, ինչպես նաև համապատասխան քրեական և դատական գործերի առանձնացված վիճակագրություն վարելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտության մասին⁶⁹:

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման ու վերացման ուղղությամբ Կոմիտեն առավել մանրամասն հանձնարարականներ է ներկայացնում իր 2002 թվականի Եզրափակիչ դիտարկումներում: Այսպես, մտահոգություն հայտնելով կանանց նկատմամբ բռնության տարածվածության կապակցությամբ և առ այն, որ ՀՀ գործող օրենսդրությունը որևէ հատուկ դրույթ չի նախատեսում ընտանեկան բռնության վերաբերյալ, Կոմիտեն.

- կոչ է անում ընդունելու, որ կանանց նկատմամբ բռնությունը, այդ թվում՝ ընտանեկան բռնությունը, Կոնվենցիայի իմաստով կանանց իրավունքների խախտում է՝ պետությունից պահանջելով ընտանիքում և հասարակության մեջ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության խնդրի լուծման ուղղությամբ համապարփակ և միասնական միջոցների նախատեսումը սահմանել առաջնահերթություն.
- կոչ է անում երաշխավորելու, որ նման բռնությունը (կանանց նկատմամբ բռնությունը, այդ թվում՝ ընտանեկան բռնությունը՝ Վ. Կ.) քրեորեն հետապնդելի է և խստորեն պատժվող.
- հիմք ընդունելով իր թիվ 19 Ընդհանուր հանձնարարականը⁷⁰՝ Կոմիտեն պահանջում է, որ ընդունվի ընտանեկան բռնության մասին օրենսդրություն և երաշխավորվի, որ տուժողներն ունեն խախտված իրավունքների վերականգնման և պաշտպանության անհապաղ միջոցներ.
- Կոմիտեն նաև հանձնարարում է, որ ձեռնարկվեն բռնության զոհ կանանց և աղջիկներին ապաստարաններով ապահովելու միջոցներ, ինչպես նաև երաշխավորվի, որ հանրային ծառայողները, մասնավորապես՝ իրավապահ մարմինների ծառայողները և դատական համակարգի ներկայացուցիչները, ինչպես նաև բժշկական օգնություն տրամադրողները և սոցիալական աշխատողները ամբողջովին զգայուն են կանանց և աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձևերի նկատմամբ.
- հանձնարարում է ձեռնարկել իրազեկվածության բարձրացման միջոցառումներ, ներառյալ զրո հանդուրժողականության արշավներ մեդիայի և հանրային կրթական ծրագրերի միջոցով՝ երաշխավորելու, որ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձևերը բարոյական և սոցիալական առումներով անընդունելի են⁷¹:

⁶⁹ Նույն տեղում, էջեր 5-6:

⁷⁰ Ընդհանուր հանձնարարականը վերաբերում է հենց կանանց նկատմամբ բռնությանը: Ըստ հանձնարարականի՝ գենդերային բռնությունը խտրականության տեսակ է, ինչը լրջորեն խոչընդոտում է տղամարդկանց հետ հավասարության հիմունքներով իրենց իրավունքներն ու ազատությունները իրացնելու կանանց հնարավորությունը: Հանձնարարականի ամբողջական տեքստի համար տե՛ս [INT CEDAW GEC 3731 E.pdf \(ohchr.org\)](#):

⁷¹ Տե՛ս Կոմիտեի 2002 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մասեր 46-47, էջ 154:

Կառավարության միավորված 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվությունում (2007 թ.) ըստ էության տեղեկատվություն առկա չէ նշված հանձնարարականների ուղղակի կատարման վերաբերյալ: Կառավարությունը, մասնավորապես, կոչ է անում մեր արդեն իսկ հիշատակած 2004-2010 թվականների ազգային ծրագրին, որով, ի թիվս այլնի, նախատեսվում էր «կանանց նկատմամբ բռնության երևույթի վերացմանն» ուղղված միջոցառումների իրականացում, որոնք իրենց բնույթով առավելապես ենթադրում էին նախապատրաստական բնույթի գործողություններ, ինչպես, օրինակ՝ ուսումնասիրությունների իրականացում, մեխանիզմների ու մեթոդների մշակում և այլն (Բաժին 5)⁷²: Ի պատասխան Կոմիտեի այն դիտարկմանը, թե Հայաստանում կանանց նկատմամբ բռնությունը տարու է⁷³՝ Կառավարությունը նշում է, թե վերջին ժամանակներում կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը սովորական և բաց քննարկման առարկա են դարձել Հայաստանում (մաս 281)⁷⁴:

Զեկուցվող ժամանակահատվածում քիչ թե շատ շոշափելի կարելի է համարել 2006 թվականին ՀՀ ոստիկանության համակարգում փոխոստիկանապետի գլխավորությամբ աշխատանքային խմբի ստեղծումը Ազգային ծրագրի՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման միջոցառումները ժամանակին և պատշաճ կյանքի կոչելու նպատակով: Հատկանշական է նաև ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում կանանց նկատմամբ հանցագործությունների առանձնացված հաշվառում վարելու փաստը (մաս 282)⁷⁵:

Իր 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումներում կանանց նկատմամբ բռնության կապակցությամբ Կոմիտեն հղում է անում իր նախորդ՝ 2002 թվականի Եզրափակիչ դիտարկումներին և դրանցում արձանագրված մտահոգություններին⁷⁶՝ ափսոսանք հայտնելով, որ Կառավարության հաշվետվությունը որևէ նշում չի պարունակում քննարկվող երևույթի՝ կանանց նկատմամբ բռնության կապակցությամբ: Այնուհետև, ընդգծելով ՀՀ ոստիկանության հետ համագործակցության արդյունքում Կանանց իրավունքների կենտրոնի 2002 թվականին ապաստարան հիմնելու հանգամանքը, Կոմիտեն, այդուհանդերձ, մտահոգություն է հայտնում բռնության գոհերի համար բավարար ապաստարանների բացակայության կապակցությամբ (մաս 22)⁷⁷: Վերոգրյալի հիման վրա Կոմիտեն ներկայացնում է համապատասխան հանձնարարականներ, որոնք մասամբ կրկնում են նախկինում տրվածները, թեպետ առանձին հանձնարարականների առումով Կոմիտեի հանձնարարականներն ավելի խիստ են ձեռնարկվելիք միջոցառումների առավել որոշակիության առումով: Այսպես՝ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության մասով Կոմիտեն պահանջում է, որ պետությունն **անհապաղ** ընդունի կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ օրենսդրություն: Կոմիտեն կրկին

⁷² Տե՛ս Ծրագիրը, նույն տեղում:

⁷³ Տե՛ս Կոմիտեի 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 55, էջ 80:

⁷⁴ Տե՛ս Կառավարության 2007 թվականի միավորված 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, էջ 54:

⁷⁵ Ավելի մանրամասն տե՛ս Կառավարության 2007 թվականի պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, էջ 55:

⁷⁶ Կոմիտեի 2002 թվականի Եզրափակիչ դիտարկումները (A/57/38), մասեր 46, 47, էջ 154:

⁷⁷ Տե՛ս Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, էջ 5:

պահանջում է, որ ընդունվելիք օրենսդրությամբ բռնության ենթարկված կանայք և աղջիկները խախտված իրավունքների վերականգնման և պաշտպանության անհապաղ միջոցների հասանելիություն ունենան, ներառյալ պաշտպանական որոշումների հասանելիությունը և համապատասխան ապաստարանների բավարար քանակի առկայությունը, նաև բոլոր մարզերում լուծելու գյուղական բնակավայրերում ապրող կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, փախստական և փոքրամասնությունների խմբերին պատկանող կանանց կարիքները⁷⁸:

Կառավարության հաջորդ՝ միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը (2015 թ.) հղում է անում ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի թիվ 23 արձանագրային որոշմամբ հաստատված մի շարք փաստաթղթերի՝ Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը և Ընդդեմ գենդերային բռնության 2011 թվականի միջոցառումների ծրագիրը^{79, 80}: Ռազմավարական ծրագրով գենդերային բռնության ենթարկված անձանց իրավական պաշտպանության համակարգը կատարելագործելու նպատակով, մասնավորապես, նախատեսվում էր գենդերային բռնության ոլորտի համապատասխան իրավական ակտերի, այդ թվում՝ «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը և ներկայացումը ՀՀ Կառավարություն⁸¹: Նշենք, որ հաշվետվության ներկայացման պահին «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծն արդեն իսկ ներկայացվել էր Կառավարության քննարկմանը⁸²:

Առաջ անցնելով՝ նշենք, որ 2017 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ-ում ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը⁸³: Օրենքը, մասնավորապես,

⁷⁸ Նույն տեղում, մաս 23:

⁷⁹ Արձանագրային որոշման համար ավելի մանրամասն տե՛ս [ԸՆԴԴԵՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ \(irtek.am\)](http://www.irtek.am): Ռազմավարական ծրագրով, մասնավորապես, նախատեսվում է մի շարք կարևոր միջոցառումների իրականացում՝ գենդերային բռնության կանխարգելման (Նպատակ 1), գենդերային բռնության զոհերին համապարփակ աջակցության տրամադրման, գենդերային բռնության ենթարկվածների պաշտպանության (Նպատակ 2), գենդերային բռնություն կիրառողների հետապնդման նպատակներով (Նպատակ 3):

⁸⁰ Ավելի մանրամասն տե՛ս Կառավարության 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 48:

⁸¹ Տե՛ս Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, նույն տեղում, կետ 2.1:

⁸² Այդուհանդերձ, ինչպես նշվում է միավորված պարբերական հաշվետվությունում, նկատի ունենալով երկրում ընթացող դատական և իրավական բարեփոխումների փաստը, «ՀՀ Կառավարությունը հանձնարարել է համապատասխան գերատեսչություններին «ապահովել ընտանեկան բռնության տարբեր ձևերի, ինչպես նաև դրանց հակազդելու և դրանք կանխարգելելու համար գործնական մեխանիզմների ներառումը» բարեփոխումների ծրագրի շրջանակում նախատեսվող իրավական ակտերի փոփոխություններում...»: Նշվածը կարող է վկայել խնդրո առարկայի առնչությամբ համալիր մոտեցում ցուցաբերելու ՀՀ Կառավարության պատրաստակամության մասին: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Կառավարության 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 50:

⁸³ Օրենքի ամբողջական տեքստի համար տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672>:

սահմանում է «ընտանիքում բռնություն» հասկացությունն ու դրա տեսակները⁸⁴, թվարկում ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները, այդ թվում՝ պաշտպանական որոշումը որպես պաշտպանության միջոց⁸⁵, սահմանվում են ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառնություններ իրականացնող մարմինները և հատուկ կառույցները՝ աջակցության կենտրոնները և ապաստարանները, ինչպես նաև դրանց ֆինանսավորման աղբյուրները⁸⁶: Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հետագայում ձևավորվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի ստեղծումը (մաս 2): ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1685-Ս որոշմամբ սահմանվեց Խորհրդի անհատական կազմը, որում մեծապես ընդգրկված են ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ գործադիր իշխանության մարմնի ներկայացուցիչների հետ⁸⁷:

Հատկանշական է, որ կանանց դեմ բռնության հիմնախնդրին անդրադառնալով՝ Կառավարությունը կրկին նշում է, որ ՀՀ-ում բռնությունը կարգավորված է մի շարք իրավական ակտերով՝ ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք և ՀՀ ընտանեկան օրենսգիրք: Կառավարությունը միաժամանակ նշում է, որ նշված նորմատիվ իրավական ակտերի համաձայն՝ բռնությունը տարբերակված չէ տուժողի սեռով պայմանավորված. բռնությունը պատժելի է՝ անկախ սեռից⁸⁸: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության կանխարգելման, դրա համար պատասխանատվության սահմանման, տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և վերականգնման առնչությամբ պետության դիրքորոշումը՝ պայմանավորելով ընտանեկան բռնության վերաբերյալ ընդունվելիք օրենքի հիմնական բովանդակությունը : Մասնավորապես, նկատի ունենք «կանանց նկատմամբ բռնության» և «ընտանեկան բռնության»՝ որպես առանձին հանցատեսակի կամ զանցատեսակի ամրագրման բացառման վերաբերյալ դիրքորոշումը:

Կառավարությունն իր միավորված 5-րդ և 6-րդ հաշվետվությունում հղում է անում զեկուցվող ժամանակահատվածում ձեռնարկված մի շարք իրավական, կազմակերպչական և ինստիտուցիոնալ միջոցառումների⁸⁹:

⁸⁴ Ընտանիքում բռնություն է համարվում սույն օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև, տե՛ս օրենքը, նույն տեղում, հոդված 3, մաս 1:

⁸⁵ Նույն տեղում, հոդված 5:

⁸⁶ Նույն տեղում, գլուխ 3:

⁸⁷ Խորհրդի անդրանիկ նիստը տեղի ունեցավ 2019 թվականի հունվարի 22-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանի ղեկավարությամբ, [Տեղի է ունեցել ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի առաջին նիստը | 1in.am](#):

⁸⁸ Տե՛ս Կառավարության 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 48:

⁸⁹ Մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից 2012-2013 թթ. «Հայաստանում ընտանեկան բռնության գոհ դարձած կանանց մատուցվող ծառայությունների որակը բարելավելու մասին» իրականացված ծրագիրը (նույն տեղում, մաս 51): 2013 թվականին առաջին անգամ ՀՀ

Կոմիտեն իր 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներում, ի թիվս այլնի, դրական է գնահատում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումը (2014 թ.)⁹⁰, որով տրվում է «ընտանեկան բռնություն»⁹¹ և «նախնական նույնացում»⁹² հասկացությունների սահմանումը: Դրական է գնահատվում նաև 2013 թվականի «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումը (մաս 4)⁹³: Կոմիտեն նաև ողջունում է Հայաստանին ինստիտուցիոնալ և քաղաքականության բարելավման ուղղությամբ ձեռնարկված ջանքերի կապակցությամբ⁹⁴ (մաս 5)⁹⁵:

Կոնկրետ գենդերային բռնության կապակցությամբ ողջունելով Հայաստանի ձեռնարկած քայլերը՝ «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, ի թիվս այլնի, Կոմիտեն, այդուհանդերձ, մտահոգություն է հայտնում մի շարք հարցերի կապակցությամբ՝ դրանց լուծման ուղղությամբ ներկայացնելով մի շարք հանձնարարականներ: Հիմնականում կրկնելով նախորդ երկու Եզրափակիչ դիտարկումներում տրված հանձնարարականները⁹⁶, Կոմիտեն դրանք հավելում է ևս մեկով, մասնավորապես.

նուստիկանության համակարգում «Անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի» առանձին վարչության ստեղծումը, որի նպատակը, ինչպես տեսնում ենք անվանումից, նաև ընտանեկան բռնության հարցերով զբաղվելն է: Կառավարությունը նաև ներկայացնում է կանանց նկատմամբ բռնության, ինչպես նաև ընտանեկան բռնության վերաբերյալ վիճակագրական տվյալներ (նման տվյալների ներկայացումը հնարավոր եղավ ուստիկանության ինֆորմացիոն կենտրոնում դրանց առանձնացված վարման պարագայում): Այսպես, ըստ առանձնացված վիճակագրության, 2012 թվականին կանանց նկատմամբ բռնության 2026 գործեր են գրանցվել, որոնցից 625-ը ընտանեկան բռնության դեպքեր են: 2013 թվականի 9 ամիսների ընթացքում կանանց նկատմամբ բռնության 1449 գործեր են գրանցվել, որոնցից 432-ը՝ ընտանեկան բռնության դեպքեր (նույն տեղում, մաս 52):

⁹⁰ Օրենքի ամբողջական տեքստի համար տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165185>:

⁹¹ Ըստ վերոնշյալ օրենքի՝ ընտանեկան բռնությունը բնորոշվում է որպես ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական կամ սեռական կամ հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառում կամ տնտեսական միջոցներից զրկում (հոդված 2, մաս 1, կետ 7): «Ընտանեկան բռնություն» հասկացությունը սահմանող նշված 7-րդ կետը 13.12.2017 թ. ուժը կորցրած է ճանաչվել՝ պայմանավորված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որում մանրամասն իրավական կարգավորման են ենթարկվում ընտանիքում բռնության վերաբերյալ հարցերն ու դրա տեսակները:

⁹² Նախնական նույնացումը ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման միջոցով «ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձի հայտնաբերումն է (հոդված 2, մաս 1, կետ 8):

⁹³ Տե՛ս Կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, էջեր 1, 2:

⁹⁴ Ի թիվս այլնի նկատի ունի ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագիրը, տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=76932>:

⁹⁵ Տե՛ս Կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում:

⁹⁶ Հանձնարարականների ամբողջական ցանկի համար տե՛ս Կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 17, էջեր 5, 6:

- վավերացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան⁹⁷:

Հայաստանը Ստամբուլյան կոնվենցիան ստորագրել է 2018 թվականի հունվարին, սակայն այն դեռևս չի վավերացվել՝ հիմնականում պայմանավորված կոնվենցիայի վավերացման շուրջ հասարակության որոշ խմբերի դրսևորած դիմադրությամբ, դրա վավերացման շուրջ ծավալված բողոքի ակցիաներով: Դիմադրության հետևում կանգնած ուժերը, ի թիվս այլնի, տարածեցին քննարկումներ Բուլղարիայի սահմանադրական դատարանի կողմից «կոնվենցիայի վավերացումը մերժելու» վերաբերյալ⁹⁸:

Նշում հանձնարարականների կատարման վերաբերյալ: Հանձնարարականների պահանջները կատարվել են մասամբ: Ի թիվս այլնի հատկանշական է հատկապես «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Օրենքի ընդունումը, մեր գնահատմամբ, առաջընթաց քայլ է: Անկախ թերկարգավորումներից⁹⁹՝ օրենքի ընդունումն ունի խորհրդանշական բնույթ, այն կարևոր է նաև հանրային խոսույթում և իրավական մշակույթում ձևափոխումների առումով: Բացի այդ՝ չպետք է թերագնահատել փոփոխությունների ու լրացումների միջոցով օրենքի հետևողական կատարելագործման հավանականությունը: Նմանապես, մեր գնահատմամբ, առավել նպաստավոր քաղաքական իրադրության պայմաններում հավանական է նաև Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը: Հատկանշական են նաև Հայաստանի ձեռնարկած քայլերը համապատասխան իրազեկվածության արշավների իրականացման, վերապատրաստումների անցկացման, առանձնացված վիճակագրության վարման ուղղությամբ:

Հանձնարարականների մասնակի կատարման պատճառները և վերհանված օրինաչափությունները

- Ինչպես արդեն նշել ենք վերևում, Հայաստանն ընդունել է *ընտանեկան բռնության* վերաբերյալ առանձին օրենք: Դրան զուգահեռ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ (2020-2022 թթ.)¹⁰⁰ 2020 թվականի 2-րդ կիսամյակում

⁹⁷ Կոնվենցիան ստորագրվել է 2011 թվականի մայիսի 11-ին Թուրքիայի Ստամբուլ քաղաքում, ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 1-ին: Կոնվենցիայի ամբողջական տեքստի համար (հայերեն) տե՛ս [Convention Armenian version \(coe.int\)](http://coe.int):

⁹⁸ Այս և այլ շահարկումներն այնքան շատ էին, որ ՀՀ արդարադատության նախարարությունը ստիպված էր պարզաբանել կոնվենցիայի վավերացման վերաբերյալ թյուրընկալումները և ներկայացնել հակափաստարկներ, [888Convention 210 messages AUGUST8.pdf \(moj.am\)](http://888Convention210messagesAUGUST8.pdf(moj.am)):

⁹⁹ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, e-draft.am:

¹⁰⁰ Հաստատված է ՀՀ Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշմամբ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138194>

նախատեսվում էր ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության քրեականացումը միջազգային չափորոշիչներին համապատասխան¹⁰¹: 2022 թվականի հուլիսի 1-ից օրինական ուժի մեջ մտավ ՀՀ նոր քրեական օրենսգրքը¹⁰², որով ընտանեկան բռնությունն ու կանանց նկատմամբ բռնությունը՝ որպես այդպիսին, քրեականացված չեն¹⁰³: Այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ նոր և նախկին քրեական օրենսգրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես «Մարդու դեմ ուղղված հանցագործություններ» բաժնում նախատեսված հանցակազմերն ունեն ծանրացնող հանգամանքների բավականին լայն ցանկ: Բացի այդ՝ ՀՀ քրեական օրենսգրքի (2021 թ.) 71-րդ հոդվածով նախատեսված է քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բավականին լայն ցանկ¹⁰⁴: Առանց նսեմացնելու քրեական օրենքի նշանակությունը՝ պարզապես ցանկանում ենք նշել, որ, մեր կարծիքով, անհրաժեշտ է ջանքերն ուղղել ընտանիքում բռնության կանխարգելմանը, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությանը և ընտանիքում համերաշխության վերականգնմանը՝ շարունակական կերպով կատարելագործելու ներդրված մեխանիզմները, ինչին էլ հենց ուղղված է հիշատակված օրենքը: Բացի այդ՝ պակաս կարևոր չէ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ գործերի առանձնացված վիճակագրության վարումը:

- Ստամբուլյան կոնվենցիայի չվավերացման մասով. ըստ Կառավարության 2020 թվականի 7-րդ պարբերական հաշվետվության՝ ազգային ընթացակարգերն անցնելուց հետո Կոնվենցիան պիտի վավերացվեր, թեպետ վավերացման համար կոնկրետ ժամկետներ չեն

¹⁰¹ Տե՛ս Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիրը, գործողություն թիվ 5, [Lokal 2020-1978hav2_inko2178.docx \(live.com\)](https://www.inko2178.docx):

¹⁰² Ընդունվել է 05.05.2021 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165138>:

¹⁰³ Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության քրեականացումը, իհարկե, հնարավոր է նաև ներկայումս՝ նոր քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով, ինչը, սակայն, մեր գնահատմամբ այդքան էլ հեշտ իրագործելի խնդիր չէ: Ֆիզիկական բռնության օրինակով, դիցույք, հնարավոր է քրեական օրենքով առողջության դեմ ուղղված հանցագործություններին զուգահեռ նոր արարքներ նախատեսել՝ այդ արարքներն ընտանիքի անդամների կողմից (միջև) կատարված լինելու դեպքերով՝ դրանց համար ավելի խիստ պատիժ սահմանելով. նույն խստության կամ նվազ խսիտ պատիժներ նախատեսելու պարագայում ընտանեկան բռնության դեպքերով առանձին հանցակազմ(եր)ի նախատեսումն անիմաստ է: Թեպետ այս պարագայում ամենադժվար խնդիրը, մեր գնահատմամբ, որոշելն է, թե առողջությանը պատճառված ո՞ր ծանրության վնասի դեպքում է, որ արարքի առանձին որակումն այլևս աննպատակահարմար կլինի, օրինակ՝ կարո՞ղ է, արդյոք, որպես առանձին հանցակազմ նախատեսվել ընտանիքի անդամների միջև (կողմից) առողջությանը ծանր վնաս պատճառելը կամ սպանությունը: Կարծում ենք՝ ոչ, և պատճառն այն է, որ նշված արարքների վտանգավորության աստիճանով պայմանավորված ընտանիքի անդամների միջև (կողմից) կատարված լինելն էական հանգամանք չի կարող համարվել՝ առնվազն նման արարքն առանձին որակելու համար: Այս պարագայում, իհարկե, առավել խելամիտ լուծումը հանցավոր արարքը՝ ընտանիքի անդամների միջև (կողմից) կատարված լինելը որպես առանձին ծանրացնող հանգամանք նախատեսելն է: Թեպետ, ինչպես նշել ենք, վերևում, ՀՀ քրեական օրենսգրքի 71-րդ հոդվածը նախատեսում է ծանրացնող հանգամանքների բավականին լայն ցանկ:

¹⁰⁴ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը, հոդված 71, նույն տեղում:

նշվում: Ինչպես նշել ենք, Կոնվենցիան մինչ օրս չի վավերացվել¹⁰⁵, պատճառը անբարենպաստ պայմաններում քաղաքական ռիսկի չդիմելու ներկայիս իշխանությունների դիրքորոշումն է:

- Հայաստանը համապատասխան քայլեր է ձեռնարկել իրազեկվածության արշավների իրականացման, վերապատրաստումների անցկացման, առանձնացված վիճակագրության վարման ուղղությամբ: Հատկապես այս միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու համար կարևոր է Կոնվենցիայով նախատեսված բոլոր միջոցառումների իրականացման նպատակով համալիր մոտեցման որդեգրումը:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ սույն բաժնով նախատեսված հանձնարարականների մասնակի իրականացման պատճառը սերտորեն կապված է հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ առկա կարծրատիպների, կանանց տնտեսական հզորացման անհրաժեշտության հետ:

Առաջնահերթություն

- Կրկին՝ կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության կանխարգելման ու վերացման նպատակով, մեր գնահատմամբ, անհրաժեշտ է շեշտադրել հատկապես կարծրատիպների հաղթահարմանն ու կանանց տնտեսական հզորացմանն ուղղված հանձնարարականների լիարժեք կատարումը:
- Մեր գնահատմամբ՝ առաջնահերթություն է նաև Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը:

¹⁰⁵ Կոնվենցիան նաև չի ներկայացվել ՀՀ Սահմանադրական դատարան՝ Կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը ստուգելու նպատակով՝ ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն:

ԲԱԺԻՆ 4. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊՆԵՐ. ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՆ ՈՒ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

Հաջորդ հանձնարարականը վերաբերում է ավանդական կարծրատիպների դեմ պայքարին ու դրանց հաղթահարմանը: Այսպես՝ Կոմիտեն իր 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումներում խստորեն կոչ է անում Կառավարությանը կրթական համակարգի և էլեկտրոնային մեդիայի միջոցով պայքարելու կանանց՝ «մոր ազնիվ դերում» պատկերող ավանդական կարծրատիպների դեմ և բարձրացնելու իրազեկվածությունը տղամարդկանց՝ երեխաների խնամքի հարցում ունեցած դերի և ծնողավարության համար պատասխանատվության վերաբերյալ (մաս 65)¹⁰⁶:

Կոմիտեին մինչ այդ ներկայացված սկզբնական հաշվետվությամբ (վերանայված տարբերակ, 1997 թ.) կանանց՝ ցանկացած մասնագիտություն ընտրելու ազատության իրավունքը ընդգծելուն զուգահեռ Կառավարությունը հղում է անում ՀՀ աշխատանքային օրենսգրքի (1972 թ.)¹⁰⁷ կանանց համար չընդունվող աշխատանքներ սահմանող և սահմանափակումներ նախատեսող իրավակարգավորումներին (մասնավորապես՝ հոդվածներ 184-187)¹⁰⁸: Նշված նորմերով, ի թիվս այլնի, օրինակ, նախատեսվում էր, որ արգելվում է կանանց աշխատանքը կիրառել ծանր կամ վնասակար պայմաններ ունեցող, ինչպես նաև ստորերկրյա աշխատանքներում՝ բացի մի քանի ստորերկրյա աշխատանքներից (ոչ ֆիզիկական աշխատանքներ կամ սանիտարական ու կենցաղային սպասարկման աշխատանքներ) (հոդված 184, մաս 1)¹⁰⁹: Առաջ անցնելով նշենք, որ ներկայիս աշխատանքային օրենսգրքը նման սահմանափակում նախատեսում է հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար որպես մայրության պաշտպանության միջոց¹¹⁰:

Շարունակելով՝ Կառավարությունն իր սկզբնական հաշվետվության մեջ նշում է, որ կանայք ավանդաբար պատասխանատու են նաև երեխաների դաստիարակության և տնային տնտեսության վարման համար: Այս պարտականությունը, սակայն, ոչ թե բխում է սեռերից որևէ մեկի գերակայության կամ ստորադասության գաղափարից, այլ պատմությունից ու

¹⁰⁶ Տե՛ս Կոմիտեի 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 65, էջ, 81:

¹⁰⁷ Նախկին աշխատանքային օրենսգրքի ամբողջական տեքստի համար տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգրք (1972 թ.), [ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԲ \(irtek.am\)](http://www.irtek.am):

¹⁰⁸ Տե՛ս Կառավարության 1997 թվականի սկզբնական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 18:

¹⁰⁹ Նախկին աշխատանքային օրենսգրքը, նույն տեղում, հոդված 184, մաս 1: Նախատեսվում էր նաև, որ ծանր և վնասակար պայմաններ ունեցող աշխատանքների ցանկը, ուր արգելվում է կանանց աշխատանքի կիրառումը, հաստատվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Արգելվում են նրանց կողմից կանանց համար սահմանված նորմերը գերազանցող ծանրությունների փոխադրումն ու տեղաշարժումը (մաս 2):

¹¹⁰ Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի (2004 թ.) 258-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավելն արգելվում է: ՀՀ աշխատանքային օրենսգրքի համար տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166596>:

ավանդույթներից, «որտեղ կանայք վայելում են մոր ազնիվ դերը՝ դրանից բխող բոլոր պարտականություններով»¹¹¹:

Կառավարությունը, իր 2-րդ պարբերական հաշվետվությունում (1999 թ.) ընդգծելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տղամարդկանց և կանանց օրենսդրորեն երաշխավորված իրավահավասարությունը, այդուհանդերձ ընդունում է, որ «ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքները, հայ կանայք առավել հետևողական աջակցության կարիք ունեն կյանքի տարբեր ոլորտներում հավասար հնարավորությունների հաստատման նպատակով» (մաս 29)¹¹²: Կառավարությունը նաև ընդունում է, որ Հայաստանի քաղաքացիների համոզմունքների և վարքի մեջ տղամարդկանց և կանանց դերերի վերաբերյալ կարծրատիպները, հատկապես ընտանեկան հարաբերություններում, դեռ բավականին շոշափելի են, հատկապես գյուղական բնակավայրերում և միջին տարիքի մարդկանց ու մեծահասակների շրջանում¹¹³: Կառավարությունը նաև հղում է անում Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թվականներին կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման Ազգային ծրագրին¹¹⁴, որով նախատեսվում է բազմաբնույթ միջոցառումների իրականացում¹¹⁵: Կառավարությունը նաև հղում է անում մի շարք այլ միջոցառումների, որոնք մասնակի լուծումներ էին ենթադրում և էական արդյունքների չէին կարող հանգեցնել¹¹⁶: Մյուս կողմից՝ զգալի է օրինակ, 1998 թվականի դրությամբ գրանցված հասարակական կազմակերպությունների թիվը՝ 1700, որոնց 12 տոկոսը զբաղվում է կանանց և երեխաների հարցերով¹¹⁷:

Արդեն 2002 թվականի Եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն մտահոգություն է հայտնում առ այն, որ չնայած կրթության բարձր մակարդակին, որ կանայք հասել են, խոր արմատավորված հայրիշխանական վերաբերմունքը շարունակում է պահպանվել (մաս 54)¹¹⁸: Ըստ այդմ՝ Կոմիտեն հանձնարարում է.

- ձեռնարկել հրատապ և լայն շրջանակ ընդգրկող միջոցառումներ, ինչպես, օրինակ՝ ուսումնական ծրագրերի և դասագրքերի վերանայումը, իրազեկվածության բարձրացմանն

¹¹¹ Տե՛ս Կառավարության 1997 թվականի սկզբնական հաշվետվությունը, նույն տեղում: Որպես արձանագրված առաջադիմություն՝ նշվում է ճանապարհային ոստիկանության համակարգում ստեղծված՝ միայն կանանցից բաղկացած ստորաբաժանման մասին (մաս 21): Բացի այդ՝ հղում է արվում ընտանիքի ու մայրության պաշտպանությանն ուղղված օրենսդրական կարգավորումներին (մաս 26):

¹¹² Տե՛ս Կառավարության 1999 թվականի 2-րդ հաշվետվությունը, նույն տեղում, մաս 29, էջեր 9, 10:

¹¹³ Նույն տեղում, մաս 30, էջ 10:

¹¹⁴ Տե՛ս ՀՀ Կառավարության 1998 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թվականներին կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման Ազգային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 406 որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=6730>: Նշված ազգային ծրագրին փոխարինելու եկավ Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը, տե՛ս նույն տեղում:

¹¹⁵ Տե՛ս Կառավարության 1999 թվականի 2-րդ հաշվետվությունը, նույն տեղում, մաս 33, էջ 10:

¹¹⁶ Տե՛ս նույն տեղում, մաս 36, էջ 10, 11:

¹¹⁷ Նույն տեղում, մաս 35, էջ 10:

¹¹⁸ Տե՛ս Կոմիտեի 2002 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 54, էջ 55:

ուղղված ծրագրերի իրականացումը, այդ թվում՝ տղամարդկանց ու տղաների համար նախատեսված՝ ընտանիքում և հասարակության մեջ կանանց ու աղջիկների և տղամարդկանց ու տղաների դերերի ու պարտականությունների վերաբերյալ կարծրատիպային և խտրական վերաբերմունքը և ընկալումները փոխելու նպատակով¹¹⁹:

Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումներին ընդառաջ ներկայացված Կառավարության միավորված 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվությունում (2007 թ.) Կառավարությունը ներկայացնում է Կոմիտեի նախորդ հանձնարարականների կատարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների բավականին լայն ցանկ¹²⁰:

Ուշագրավ են հատկապես Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագրի՝ ՁԼՄ-ների և մշակութային հաստատություններին վերաբերող հատվածում¹²¹ նախատեսված միջոցառումները: Դրանց շարքում, ի թիվս այլնի, նախատեսվում է լրագրողների համար գենդերային իրազեկության բարձրացման դասընթացների կազմակերպում (կետ 7.1.1), ռադիո և հեռուստահաղորդումների, ինչպես նաև հրապարակումների մշտադիտարկման իրականացում՝ կնոջ հասարակայնորեն անցանկալի և նսեմացնող կերպարը ներկայացնելու միտումը հաղթահարելու համար (կետ 7.3.1): Կոնկրետ այս միջոցառման փաստացի իրականացման կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը (2000 թ.)¹²², որ մասնավոր հեռուստառադիոընկերությունների գործունեությունը կարգավորող նորմատիվ հիմքն է, նշվածի կապակցությամբ որևէ կարգավորում չէր պարունակում: Մինչդեռ առնվազն մասնավոր հեռուստառադիոընկերությունների գործունեության առումով բավականին արդյունավետ կլիներ կարգավորող մարմնին՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին, համապատասխան վերահսկողական և մշտադիտարկման լիազորություններով օժտելը: Առաջ անցնելով նշենք, որ ի տարբերություն նախկին օրենքի՝ «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի օրենքը, մասնավորապես, նախատեսում է հետևյալը. «Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնք հետապնդում են ազգային, ռասայական, սեռային և կրոնական հատկանիշներով խտրականություն քարոզելու նպատակ կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն»¹²³:

¹¹⁹ Տե՛ս նույն տեղում, մաս 55:

¹²⁰ Տե՛ս Կառավարության 2007 թվականի միավորված 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մասեր 58-68, էջեր 13-16:

¹²¹ Ազգային ծրագրի՝ «ՁԼՄ-ների և մշակութային հաստատությունների դերը կանանց հիմնահարցերի լուսաբանման և կնոջ ընդօրինակելի կերպարի ձևավորման գործում» բաժինը: Տե՛ս Ազգային ծրագրի, նույն տեղում, բաժին 7:

¹²² Օրենքը ուժը կորցրած է ճանաչվել 2020 թվականին: Օրենքի ամբողջական տեքստի համար տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=141689>:

¹²³ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք (2020 թ.), հոդված 9, մաս 7, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145079>: Ի դեպ, նման արգելք է նախատեսված հանրային հեռարձակողների համար (հոդված 22, մաս 6):

Զեկուցվող ժամանակահատվածում Կառավարությունը, ի թիվս այլնի, մատնանշում է ՀԿ-ների ունեցած դերի կարևորության (մաս 59), Հայաստանում գենդերային կրթության ինստիտուցիոնալացման փորձերի (մաս 60), 2006-2007 թթ. ուսումնական տարում մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում գենդերի վերաբերյալ միջգիտակարգային և հատուկ դասընթացների (մաս 61) մասին¹²⁴:

Կոմիտեն իր 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումներում անդրադառնում է իր նախորդ՝ 2002 թվականի Եզրափակիչ դիտարկումներում (A/57/38) բարձրացված մտահոգություններին՝ շեշտելով, որ գոյություն ունեցող վերաբերմունքն ու կարծրատիպները լուրջ խոչընդոտ են Կոնվենցիայի կիրարկման համար, և որ դրանք քաղաքական կյանքում, աշխատաշուկայում, կրթական և այլ ոլորտներում կանանց անբարենպաստ դերի սկզբնաղբյուրն են¹²⁵: Ըստ այդմ՝ Կոմիտեն կոչ է անում պետությանը.

- հատկապես գյուղական բնակավայրերում ձեռնարկելու անհապաղ միջոցներ կանանց՝ լայնորեն ընդունված ստորակարգության և երկու սեռերին վերաբերող կարծրատիպային դերերի վերաբերյալ փոփոխություններ նախաձեռնելու ուղղությամբ: Այս միջոցառումները պետք է ներառեն իրազեկվածության բարձրացման և կրթական ծրագրեր՝ թիրախավորելով, ի թիվս այլնի, համայնքի ղեկավարների, ծնողների, ուսուցիչների, պաշտոնյաների, ինչպես նաև երիտասարդ աղջիկների ու տղաների¹²⁶: Կոմիտեն նաև հանձնարարում է պետությանը ավելի մանրամասն մշակել նման կարծրատիպները արմատախիլ անելու մեդիայի դերը, ներառյալ առաջ քաշելով կանանց ոչ կարծրատիպային և դրական կերպար, ինչպես նաև ողջ հասարակության՝ որպես մեկ ամբողջի համար գենդերային հավասարության կարևորությունը¹²⁷:

Հատկանշական է, որ Կառավարությունն իր միավորված 5-րդ և 6-րդ հաշվետվությունում (2015 թ.) մի շարք միջացառումներ է վկայակոչում՝ ուղղված Կոմիտեի վերը տրված հանձնարարականի կատարմանը¹²⁸, սակայն կրկին այդ միջոցառումները շատ ընդհանուր են և ոչ հասցեական: Օրինակ՝ նշելով, որ գենդերային կարծրատիպները ձևավորվում են վաղ տարիքում, և դրանց հաղթահարման հիմնական միջոցը կրթական ծրագրերն են՝ Կառավարությունը թվարկում է գեկուցվող ժամանակահատվածում իրականացված կրթական ծրագրերը, որոնք բնույթով հիմնականում կրթական ծրագրեր չեն, իսկ ներկայացվող կրթական ծրագրերն էլ նախատեսված են քաղաքացիական ծառայողների համար (մաս 45):

¹²⁴ Տե՛ս Կառավարության 2007 թվականի միավորված 3-րդ և 4 -րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում:

¹²⁵ Տե՛ս Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 20, էջ 4:

¹²⁶ Կոնվենցիայի 2-րդ (կետ «ֆ») և 5-րդ (կետ «ա») հոդվածներով ամրագրված պարտականություններին համապատասխան: Կոնվենցիայի համար տե՛ս նույն տեղում:

¹²⁷ Տե՛ս Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 21, էջ 4, 5:

¹²⁸ Ավելի մանրամասն տե՛ս Կառավարության 2015 թվականի միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում (մասեր 45-52), էջեր 13-16:

Կառավարության միավորված հաշվետվությամբ խոսվում է նաև մեր կողմից վերը հիշատակված «Հեռուստատեսության և ռադիոյի» մասին օրենքի և դրա հիման վրա գործող անկախ կարգավորող մարմնի կարևորության մասին (մաս 46): Մինչդեռ, ինչպես նշել ենք վերևում, միայն 2020 թվականին «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ էր, որ նորմատիվ հիմք նախատեսվեց, ի թիվս այլնի, սեռային հատկանիշով խտրականություն քարոզելու նպատակ հետապնդող կամ նման նպատակ հետապնդող տեղեկություն պարունակող տեսալսողական հաղորդումների արգելքի համար: Հետաքրքրական է նաև այն, որ Կառավարության միավորված հաշվետվությունը կրկին հղում է անում մի շարք իրավակարգավորումների, որոնք, ըստ էության, որևէ առնչություն չունեն խնդրո առարկայի հետ¹²⁹:

Կոմիտեն իր վերջին՝ 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներում, ի թիվս այլնի, մտահոգություն է հայտնում «գենդեր» հասկացության բացասական ընկալման կապակցությամբ, ինչպես նաև առ այն, որ ընտանիքում և հասարակության մեջ կանանց և տղամարդկանց դերերին և պարտականություններին վերաբերող խտրական կարծրատիպները շարունակվում են պահպանվել...¹³⁰ Ստորև ներկայացնում ենք խնդրո առարկայի վերաբերյալ Կոմիտեի՝ Հայաստանին ներկայացրած վերջին հանձնարարականները.

- ընդունել հայաստանյան հասարակության մեջ տեխնոլոգիայի ժամանակակից օգտագործմանը հարմարեցված գենդերային հաղորդակցության ռազմավարություն՝ «գենդեր» հասկացության ըմբռնումը, ինչպես նաև կանանց ու տղամարդկանց միջև հավասարության սկզբունքի ընդունումը խթանելու նպատակով.
- ազգաբնակչությանը զգայուն դարձնել «գենդեր» հասկացության, կանանց և տղամարդկանց միջև հավասարության սկզբունքի, գենդերային կարծրատիպների վերացման անհրաժեշտության առնչությամբ, ինչպես նաև երաշխավորել մեդիայի կողմից կանանց՝ որպես սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցների, դրական կերպարի խթանումը.
- իրականացնել կրթական և իրազեկվածության բարձրացման միջոցառումներ՝ նախատեսված դատական իշխանության, իրավապահ մարմինների աշխատակիցների, բժշկական սպասարկում իրականացնողների, սոցիալական աշխատողների, համայնքների ղեկավարների և ընդհանուր ազգաբնակչության համար՝ տարածելու այն ըմբռնումը, որ խտրականության բոլոր ձևերն անընդունելի են և հակաօրինական.
- տարրական և միջնակարգ դպրոցական ծրագրերում, ինչպես նաև իրավաբանական կրթության մեջ ներմուծել պարտադիր կրթություն (կրթական բաղադրիչ՝ Վ.Կ.) գենդերային հավասարության, կանանց իրավունքների և գենդերային բռնության վերաբերյալ.
- մշակել և իրականացնել տղամարդկանց և կանանց, հանրային ծառայողների, դատական իշխանության և ոստիկանության համար նախատեսված իրազեկվածության բարձրացման

¹²⁹ Տե՛ս նույն տեղում, մաս 46:

¹³⁰ Տե՛ս Կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 14, էջ 4:

արշավներ, ինչպես նաև իրազեկել առկա աջակցության ծառայությունների վերաբերյալ՝ Կոնվենցիայով նախատեսված կանանց իրավունքների իրացման խնդրին լուծում տալու նպատակով.

- շարունակել բոլոր դպրոցական դասագրքերի վերանայումը՝ վերացնելու խտրական գենդերային կարծրատիպները՝ Կոմիտեի նախորդ Եզրափակիչ դիտարկումների (CEDAW/C/ARM/CO/4, para. 31) համաձայն.
- երաշխավորել քաղացիական հասարակության, ինչպես նաև կրոնական և համայնքային ղեկավարների, իրավաբանների, դատավորների, արհեստակցական միությունների և կանանց հասարակական կազմակերպությունների մասնակցությունը կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական բարեփոխումների և ծրագրերի մշակմանը՝ դրանց կիրարկման ընթացքում նրանց մասնակցությունը երաշխավորելու նպատակով¹³¹:

Նշում հանձնարարականի կատարման վերաբերյալ: Հանձնարարականների պահանջները կատարված են մասամբ: Կառավարության պարբերական հաշվետվությունների, այդ թվում՝ վերջին՝ 7-րդ պարբերական հաշվետվության (2020 թ.)¹³² ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեպետ խնդրո առարկա հանձնարարականների կատարման ուղղությամբ Կառավարությունը ձեռնարկել և ձեռնարկում է որոշակի քայլեր, այդուհանդերձ, այդ միջոցառումները, մի դեպքում, հաճախ կրում են հոչակագրային բնույթ՝ նախատեսված են ռազմավարական ծրագրերով, որոնց իրականացման համար, սակայն, առնվազն չկա համապատասխան նորմատիվ հիմք, մեկ այլ դեպքում ընդհանուր բնույթի են և ըստ էության չեն թիրախավորում հենց ավանդական կարծրատիպների վերացումը, այլ, օրինակ, վերաբերում են մարդու իրավունքներին ընդհանրապես: Օրինակ՝ Կառավարության 2020 թվականի պարբերական հաշվետվությունում նշված՝ հանրակրթական դպրոցների 8-12 դասարանների համար նախատեսված «Հասարակագիտություն» առարկան կամ տարրական դասարանների համար նախատեսված «Ես և շրջապատող աշխարհը» առարկան և այլն¹³³:

Հատկանշական է հատկապես այն, որ Կառավարությունը խնդրո առարկա հանձնարարականների կատարմանն ուղղված միջոցառումների շարքում մանրամասն անդրադարձ է կատարում ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրին և դրա լուծման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներին, ինչպես, օրինակ՝ դրանց քրեականացմանը¹³⁴: Եվ սա, մեր գնահատմամբ, պատահական չէ. ինչպես նշել ենք սույն հետազոտության տարբեր բաժիններում՝ առանձին հանձնարարականների պահանջների կատարման կապակցությամբ¹³⁵, այս կամ այն կոնկրետ հանձնարարականի կատարումը

¹³¹ Տե՛ս նույն տեղում, մաս 15, էջեր 4, 5:

¹³² Տե՛ս պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մասեր 37-54, էջեր 9-11:

¹³³ Նույն տեղում:

¹³⁴ Նույն տեղում, մաս 54:

¹³⁵ Օրինակ՝ քաղաքական կյանքում և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց հավասար ներկայացվածության խթանմանը, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերացմանը վերաբերող մեր անդրադարձում:

հնարավոր է միայն համապատասխան միջավայրի առկայության պայմաններում, որն էլ, իր հերթին, ենթադրում է համալիր մոտեցում կանանց նկատմամբ խտրականության վերացման հիմնախնդրին: Կանանց ստորակարգող կարծրատիպների հաղթահարումը՝ կանանց տնտեսական հզորացման հետ միասին, այդ բարենպաստ պայմանները ձևավորելու անկյունաքարն են: Միաժամանակ պետք է նկատի ունենալ այն պարզ իրողությունը, որ հատկապես կարծրատիպների դեմ պայքարը ենթադրում է մեծ քաղաքական հանձնառություն՝ հաշվի առնելով տարբեր շերտերի դիմադրությունը: Նաև սրանով է պայմանավորված միջոցառումներից շատերի ոչ թիրախային և ոչ իրագործելի բնույթը:

Նշում հանձնարարականների մասնակի կատարման պահանջների և վերհանված օրինաչափությունների մասին: Տե՛ս վերևում:

Առաջնահերթություն: Հաշվի առնելով ավանդական կարծրատիպների հաղթահարման կարևորությունը կանանց համար փաստացի հավասարության հաստատման, ինչպես նաև մյուս հանձնարարականների պահանջների լիարժեք կատարման առումով՝ սույն բաժնում ներկայացված հանձնարարականների կատարումը, մեր գնահատմամբ, խիստ առաջնահերթ է: Հանձնարարականների պահանջների լիարժեք կատարումը հնարավոր է ձեռնարկվելիք միջոցառումների նկատմամբ համալիր մոտեցում ցուցաբերելու՝ այդ հանձնարարականների համար համապատասխան նորմատիվ հիմք նախատեսելու և դրանց հասցեական լինելու պայմաններում: Ավելին՝ պետք է համապատասխան քաղաքական կամք հանձնարարականների պահանջների լիարժեք իրականացման առնչությամբ:

ԲԱԺԻՆ 5. ԹՐԱՏԻՔԻՆԳ ԵՎ ՊՈՌՆԿՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Հատկանշական է, որ 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն նշված խնդրի կապակցությամբ կոնկրետ հանձնարարականներ չի ներկայացնում, թեպետ ողջունում է նոր քրեական օրենսգրքի մշակման աշխատանքներում, ի թիվս այլնի, պոռնկության և թրաֆիքինգի միջոցով կանանց սեռական շահագործման վերաբերյալ բարեփոխումներ իրականացնելու Կառավարության մտադրությունը¹³⁶: Միաժամանակ, հանձնարարականների և առաջարկությունների հատվածում Կոմիտեն ընդգծում է բոլոր ոլորտների, հատկապես կանանց նկատմամբ բռնության, պոռնկության և առողջության վերաբերյալ տեղեկատվության և սեռի հատկանիշով տարբերակված տվյալների հավաքման խիստ անհրաժեշտությունը¹³⁷:

Կառավարությունը, Կոմիտեի դիտարկմանը ներկայացրած իր սկզբնական հաշվետվությունում (վերանայված տարբերակ, 1997 թ.) անդրադառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին¹³⁸, նշում է, որ Հայաստանի Հանրապետությունում կանանց թրաֆիքինգը և պոռնկությունը արգելված են¹³⁹: Հարկ ենք համարում նշել, որ պոռնկությամբ զբաղվելն ինքնին քրեականացված չի եղել թե՛ 1961 թվականի, թե՛ 2003 թվականի քրեական օրենսգրքերով¹⁴⁰, առավել ևս ներկայումս: Պոռնկությամբ զբաղվելու համար ներկայումս էլ նախատեսված է վարչական պատասխանատվություն, այսինքն՝ մինչ օրս այն համարվում է վարչական զանցանք¹⁴¹: Ինչ վերաբերում է թրաֆիքինգին, ապա նշված հանցավոր արարքի օբյեկտիվ կողմի մաս կազմող առանձին գործողություններ քրեականացվեցին 2003 թվականի քրեական օրենսգրքով, իսկ հետևողական փոփոխությունների արդյունքում համապատասխան քրեաիրավական նորմերը համապատասխանեցվեցին միջազգային չափորոշիչներին, ինչին կանդրադառնանք սույն հետազոտության հետագա շարադրանքում:

¹³⁶ Տե՛ս Կոմիտեի 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 48, էջ 80:

¹³⁷ Նույն տեղում, մաս 66, էջ 82:

¹³⁸ Ըստ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ «Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան, ներառյալ օրենսդրական միջոցները՝ արգելելու կանանց առևտրի և կանանց պոռնկության շահագործման բոլոր տեսակները»: Տե՛ս Կոնվենցիան, նույն տեղում, հոդված 6:

¹³⁹ Անդրադառնալով պոռնկության թվերի աճին՝ Կառավարությունը դա բացատրում է վատթար տնտեսական դրությամբ: «Այնուամենայնիվ, նկատի ունենալով ավանդական բացասական վերաբերմունքը պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ և հասարակության կողմից դրա պարսավումը, պոռնկությունը Հայաստանի համար մեծ խնդիր չի եղել, իսկ սեքս տուրիզմը բացակայում է», նույն տեղում: Ավելի մանրամասն տե՛ս Կառավարության 1997 թվականի սկզբնական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 34:

¹⁴⁰ Համապատասխանաբար տե՛ս 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգիրքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=4> և 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգիրքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=22625>:

¹⁴¹ Տե՛ս Կարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը (1985 թ.), հոդված 179.1, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167042>:

Անդրադառնալով Կառավարության 2-րդ պարբերական հաշվետվությանը՝ նշենք, որ այն գրեթե նույնությամբ կրկնում էր նախկին հաշվետվությամբ ներկայացվածը¹⁴²:

Կոմիտեի 2002 թվականի եզրափակիչ դիտարկումներն արդեն պարունակում են մանրամասն և հասցեական հանձնարարականներ թե՛ թրաֆիքինգի և թե՛ պոռնկության վերաբերյալ:

Մտահոգություն հայտնելով կանանց և աղջիկների թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ համապարփակ քաղաքականության և օրենսդրության բացակայության վերաբերյալ՝ Կոմիտեն.

- կոչ է անում կանանց ու աղջիկների թրաֆիքինգի խնդիրը ճանաչելու բարձր առաջնահերթություն՝ նշված հանցագործության դեմ պայքարի համապարփակ ռազմավարություն մշակելու միջոցով, որը պետք է ներառի մարդկանց շահագործմամբ զբաղվողների քրեական հետապնդում և պատժի ենթարկում, ինչպես նաև ընդլայնված միջազգային, տարածաշրջանային և երկկողմանի համագործակցություն թրաֆիքինգի ենթարկված կանանց ծագման, տարանցման և նպատակակետ երկրների հետ.
- ձեռնարկել միջոցառումներ կանանց տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ՝ մարդկանց շահագործմամբ զբաղվողների համար նրանց խոցելիությունը վերացնելու նպատակով, ձեռնարկել կրթական նախաձեռնություններ խոցելի խմբերի համար, այդ թվում՝ դեռահաս աղջիկների, ինչպես նաև ձեռնարկել սոցիալական աջակցության, ռեաբիլիտացիայի և վերինտեգրման միջոցառումներ թրաֆիքինգի զոհ կանանց ու աղջիկների համար.
- երաշխավորել թրաֆիքինգի ենթարկված կանանց ու աղջիկների՝ անհրաժեշտ աջակցություն ստանալը, որպեսզի վերջիններս կարողանան ցուցմունք տալ մարդկանց շահագործմամբ զբաղվող անձանց դեմ,
- վերապատրաստել սահմանային ոստիկանությանը և իրավապահ մարմինների աշխատակիցներին՝ թրաֆիքինգի զոհերին ճանաչելու և աջակցություն տրամադրելու անհրաժեշտ կարողությունները զարգացնելու նպատակով¹⁴³:

Կոմիտեն նույն եզրափակիչ դիտարկումներում անդրադառնում է նաև պոռնկության խնդրին: Այսպես՝ մտահոգություն հայտնելով Կառավարության զեկույցում և արձագանքներում պոռնկության վերաբերյալ տեղեկատվության կապակցությամբ և նկատի ունենալով, որ պետությունը բավարար չանքեր չի գործադրել պոռնկության շահագործման խնդրին լուծում տալու ուղղությամբ՝ Կոմիտեն ներկայացնում է հետևյալ հանձնարարականը.

- հաջորդ պարբերական հաշվետվությունում տրամադրել տեղեկություն պոռնկության վերաբերյալ, ինչպես նաև մշակել և իրականացնել համապարփակ ծրագիր նշված երևույթին լուծում տալու նպատակով, այդ թվում՝ պոռնկության շահագործման դեմ համապատասխան օրենսդրություն ընդունելու ճանապարհով¹⁴⁴ (մաս 51):

¹⁴² Տե՛ս Կառավարության 2-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, մասեր 38, 39:

¹⁴³ Նույն տեղում, մաս 49:

¹⁴⁴ Նույն տեղում, մասեր 50, 51:

Նշված հանձնարարականների կատարման նպատակով 2002 թվականին ՀՀ-ում ստեղծվեց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողով¹⁴⁵, որը սերտորեն համագործակցում էր մարդու թրաֆիքինգի հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվող պայքարը կանոնակարգելու և առկա բացերը վերացնելու նպատակով թրաֆիքինգի հարցերով հանձնաժողովը մշակեց և 2004 թվականին հաստատեց Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առքուվաճառքի (թրաֆիքինգ) կանխման 2004-2006 թվականների միջոցառումների ազգային ծրագիրը¹⁴⁶: Կարևոր քայլ էր նաև 2-րդ` 2007-2009 թվականների մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման Ազգային ծրագրի ընդունումը¹⁴⁷:

Զեկուցվող ժամանակահատվածում ամենաեական ձեռքբերումը, թերևս, 2003 թվականի ապրիլի 18-ին ՀՀ նոր քրեական օրենսգրքի ընդունումն էր. օրենսգիրքը` հետագայում կատարված լրացումներով ու փոփոխություններով, մեծ տեղաշարժ արձանագրեց թրաֆիքինգի և պոռնկության շահագործման գործողությունների քրեականացման առումով¹⁴⁸: 2003 թ. քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածով քրեականացվեց մարդկանց առևտուրը (նույն ինքը` թրաֆիքինգը)¹⁴⁹, պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը (261-րդ հոդված)¹⁵⁰, ինչպես նաև պոռնկությամբ զբաղվելու համար որջեր կազմակերպելը, պահելը կամ կավատությունը (հոդված 262): 2003 թվականի քրեական օրենսգրքի` թրաֆիքինգին վերաբերող հոդվածները ենթարկվեցին էական փոփոխությունների` դրանք միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով: Ի թիվս այլնի, փոփոխության ենթարկվեց մեր հիշատակած 132-րդ հոդվածը` վերնագրվելով «Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը», բայց որ ավելի կարևոր է` հանցակազմը լրացվեց օբյեկտիվ կողմի հատկանիշներով¹⁵¹: Փոփոխությունների ենթարկվեցին

¹⁴⁵ [ԹՐԱՖԻՔԻՆԳ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ \(police.am\)](http://police.am):

¹⁴⁶ Ավելի մանրամասն տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=11989>:

¹⁴⁷ Այս և այլ միջոցառումների համար տե՛ս նաև Կառավարության 2015 թվականի միավորված 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվությունը, մասեր 69-106, էջեր 16-22:

¹⁴⁸ Նախկին` 2003 թվականի քրեական օրենսգրքի տեքստի համար տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք (2003 թ.), նույն տեղում:

¹⁴⁹ ՀՀ քրեական օրենսգրքի նախնական տարբերակը չէր օգտագործում «թրաֆիքինգ» տերմինը, սակայն 132-րդ հոդվածի օբյեկտիվ կողմի վերլուծությունը մեզ թույլ է տալիս ասել, որ ըստ էության ՀՀ-ում քրեականացվեց թրաֆիքինգի` միջազգայնորեն ընդունված հանցավոր արարքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների մեծ մասը:

¹⁵⁰ Ընդ որում` նույն արարքը` մարդկանց առևտուրը, որը կատարվել է անչափահասի նկատմամբ կամ կազմակերպված խմբի կողմից, համարվում է որակյալ` ավելի ծանր հանցագործություն (հոդված 261, մաս 2):

¹⁵¹ Բացի այդ` նախատեսվեցին թրաֆիքինգին առնչվող առանձին հանցակազմեր քրեական օրենսգրքով: Մանավորապես` 2011 թվականին քրեական օրենսգիրքը լրացվեց երկու նոր հոդվածներով` «Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա դեկլարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը» (հոդված 132.2) և «Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը» (հոդված 132.3): Այլ է իրավիճակը պոռնկության շահագործման առանձին արարքների շահագործման մասով: Այսպես`

նաև պոռնկությանն առնչվող առանձին իրավահարաբերությունները քրեականացնող նշված երկու հոդվածները¹⁵²: Առաջ անցնելով նշենք, որ ՀՀ նոր քրեական օրենսգիրքը (2021 թ.) թրաֆիքինգի առումով նախատեսում է հետևյալ հանցավոր արարքները՝ «Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը» (հոդված 188), «Երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը» (հոդված 189)¹⁵³:

Կոմիտեն, իր 2009 թվականի եզրափակիչ դիտարկումներով անդրադառնալով մարդկանց թրաֆիքինգի խնդրին, դրական է գնահատում Կառավարության ձեռնարկած վերը թվարկված քայլերը, սակայն մտահոգություն է հայտնում «քննարկվող երևույթի աճի կապակցությամբ, ինչպես նաև այն փաստի առնչությամբ, որ անբավարար քայլեր են ձեռնարկվել թրաֆիքինգի հիմնական պատճառներին լուծում տալու ուղղությամբ, ինչպիսիք են տնտեսական ծանր դրությունը, ինչպես նաև կարծրատիպային գենդերային դերերի և գենդերային անհավասարության գերակշռությունը: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կոմիտեն կոչ է անում քայլեր ձեռնարկելու քրեական օրենքի կիրարկման, 2-րդ՝ 2007-2009 թվականների ազգային ծրագրի իրականացման, ինչպես նաև ապաստարանների հետագա ֆինանսավորումը մեծացնելու ուղղությամբ¹⁵⁴:

Պոռնկության վերաբերյալ, վերահաստատելով նախկինում իր հայտնած մտահոգությունները, Կոմիտեն կրկին կոչ է անում.

- հաջորդ պարբերական հաշվետվությունում ներառելու սեռի հատկանիշով տարբերակված տեղեկատվություն և տվյալներ պոռնկության շահագործման վերաբերյալ: Կոմիտեն նաև պահանջում է ուժեղացնել ջանքերը կանանց և աղջիկներին պոռնկության դրող գործոնների վերացմանն ուղղված քայլեր ձեռնարկելու ուղղությամբ, ծառայություններ տրամադրել պոռնկության մեջ ներգրավված կանանց և աղջիկների ռեաբիլիտացիայի և հասարակություն վերինտեգրման նպատակով, ինչպես նաև աջակցելու պոռնկությունը թողնել ցանկացող կանանց: Նաև Կոմիտեն պահանջում է վերացնել պոռնկությամբ զբաղվելու համար կանանց նկատմամբ կիրառվող վարչական պատասխանատվությունը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկելու պոռնկության պահանջարկի հարցի լուծման ուղղությամբ¹⁵⁵: (մաս 27): Պոռնկությամբ զբաղվելը դեռևս համարվում է վարչական

¹⁵² ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածը խմբագրվեց՝ շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու, իսկ 262-րդը՝ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու: Վերնագրերից բացի փոփոխվեցին նաև նշված երկու հանցակազմի տարրերը:

¹⁵³ Տե՛ս քրեական օրենսգիրքը, նույն տեղում:

¹⁵⁴ Տե՛ս Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մասեր 24, 25, էջ 6:

¹⁵⁵ Նույն տեղում, մասեր 26, 27:

իրավախախտում (վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, 179.1-րդ հոդված)^{156, 157}:

Նշում հանձնարարականների պահանջների կատարման վերաբերյալ: Հանձնարարականների պահանջները հիմնականում կատարված են: Հատկանշական է հատկապես միջազգային չափորոշիչներին համապատասխան թրաֆիքինգի հանցակազմի ամրագրումը ՀՀ քրեական օրենսգրքում:

Նշում չկատարված կամ մասամբ կատարված հանձնարարականների և վերհանված օրինաչափությունների վերաբերյալ: Չի կատարվել պոռնկությամբ զբաղվելը որպես վարչական զանցանք վերացնելու Կոմիտեի հանձնարարականը: Բայց որ առավել կարևոր է, համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել թրաֆիքինգի և պոռնկություն ծնող պատճառների վերացման ուղղությամբ:

Առաջնահերթություն

- Վերացնել պոռնկությամբ զբաղվելու համար նախատեսված վարչական պատասխանատվությունը:
- Միջոցներ ձեռնարկել թրաֆիքինգի և պոռնկություն ծնող պատճառների վերացման ուղղությամբ, հատկապես կանանց տնտեսական հզորացման և հավասար հնարավորությունների ստեղծման միջոցով:

¹⁵⁶ Սահմանված է տուգանք աշխատավարձի քսանապատիկի չափով (հոդված 179.1, մաս 2): Քառասնապատիկի չափով տուգանք է սահմանված նույն գործողությունները վարչական տույժ նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարվելու դեպքում (հոդված 179.1, մաս 2):

¹⁵⁷ Կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներն ըստ էության կրկնում են այս հանձնարարականները՝ հավելելով լրացուցիչ հանձնարարականներով: Ավելի մանրամասն տե՛ս Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մասեր 18, 19, էջեր 6, 7:

ԲԱԺԻՆ 6. ԿՈՆՎԵՆՏԻԱՆ ՈՒ ԴՐԱ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Արդեն 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումներից սկսած Կոմիտեն ներկայացնում է բովանդակությամբ նոր հանձնարարականներ, օրինակ՝ Կոնվենցիայի և դրա Կամընտիր արձանագրության տեսանելիության ապահովման վերաբերյալ: Մյուս կողմից՝ ավելի է շեշտվում նախկինում տրված որոշ հանձնարարականների ձևական-իրավական կողմի ապահովումը, օրինակ՝ կանանց նկատմամբ խտրականության արգելք նախատեսող համապատասխան օրենսդրության ընդունումը: Նշված հանձնարարականները մեր կողմից խմբավորվել են մեկ ընդհանուր «Կոնվենցիան ու դրա տեսանելիությունը, իրավական եզրույթներ, իրավակարգավորումներ ու իրազեկում» բաժնի ներքո:

ՊԱՌԱՄԵՆՍ

Իր 2009 Եզրափակիչ դիտարկումներում վերահաստատելով, որ Կոնվենցիայի շրջանակում պետության ստանձնած պարտականությունների լիարժեք կատարման համար առաջնային պատասխանատուն Կառավարությունն է՝ Կոմիտեն, այդուհանդերձ, ընդգծում է, որ Կոնվենցիան պարտադիր է իշխանության բոլոր թևերի համար՝ առաջարկելով խրախուսել Պառլամենտին (ՀՀ Ազգային ժողովին՝ Վ.Կ.) իր ընթացակարգերին համապատասխան, ըստ անհրաժեշտության, անհրաժեշտ քայլեր ձեռնարկել Եզրափակիչ դիտարկումների կատարման ուղղությամբ (մաս 9)¹⁵⁸:

Նշում հանձնարարականի կատարման վերաբերյալ: Հանձնարարականն ամենաառանցքային հարցերի առումով դեռևս կատարված չէ: Ինչպես նշվում է հանձնարարականում, Կոնվենցիայի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման առաջնային պատասխանատուն Կառավարությունն է: Այդուհանդերձ, Պառլամենտին՝ որպես ներկայացուցչական և օրենսդիր մարմնի դերը կարևոր է, իսկ որոշ դեպքերում՝ անփոխարինելի՝ օրենսդրական ակտերի ընդունման և միջազգային պայմանագրերի վավերացման տեսանկյունից¹⁵⁹: Օրենսդրական ակտերից խոսքը վերաբերում է «Իրավահավասարության ապահովման մասին» կամ «Իրավահավասարության մասին» օրենքի նախագծին, իսկ միջազգային պայմանագրերից՝

¹⁵⁸ Կոմիտեն այս հանձնարարականը գրեթե նույնությամբ կրկնում է նաև իր վերջին՝ 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներում: Տե՛ս Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 7:

¹⁵⁹ Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորը, Ազգային ժողովի խմբակցությունը և Կառավարությունը: Բացի այդ, նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն, քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք ունի ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուս հազար քաղաքացի: Իսկ ՀՀ Սահմանադրության 204-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է այն օրենքների նախագծերի շրջանակը, որոնք չեն կարող հանրաքվեի դրվել քաղաքացիական նախաձեռնության կարգով՝ օրենքի նախագծի ընդունումը ՀՀ Ազգային ժողովի կողմից մերժվելու դեպքում: Միջազգային պայմանագրերի վավերացումը դրանց շարքում է:

Ստամբուլյան կոնվենցիային, որոնց ընդունման և (կամ) վավերացման ուղղությամբ՝ ՀՀ պատկան մարմինները սույն հետազոտության ներկայացման պահի դրությամբ որևէ քայլ չեն ձեռնարկել¹⁶⁰:

Հանձնարարականի չկատարման պատճառները և վերհանված օրինաչափությունները: Սույն հանձնարարականի չկատարման պատճառներին և օրինաչափությունների հիմնախնդրին անդրադարձել ենք սույն հետազոտության հետագա շարադրանքում՝ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքին կատարված անդրադարձում:

Առաջնահերթություն: Սույն հանձնարարականի կատարումը, մասնավորապես՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից «Իրավահավասարության ապահովման մասին» կամ «Իրավահավասարության մասին» ՀՀ օրենքի ընդունումը և Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը, պետք է դիտարկել առաջնահերթություն՝ ոչ միայն հաշվի առնելով այդ փաստաթղթերի ապրիորի կարևորությունը, այլև նկատի ունենալով քիչ թե շատ բարենպաստ քաղաքական իրողությունը և դա ի շահ մարդու իրավունքների առաջխաղացման օգտագործելու անհրաժեշտությունը: Այսպես՝ իշխող քաղաքական ուժը՝ ի դեմս «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության, ՀՀ ութերորդ գումարման Ազգային ժողովում ունի հիշատակված օրենքն ընդունելու և միջազգային պայմանագրերը վավերացնելու համար անհրաժեշտ մեծամասնություն¹⁶¹, բացի այդ՝ կարևոր է նշել իշխող քաղաքական ուժի ի նպաստ մարդու իրավունքների գործելու առերևույթ պատրաստակամությունը: Այս և այլ հանգամանքների մասին առավել մանրամասն խոսվել է սույն հետազոտության հետագա շարադրանքում:

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ԴՐԱ ԿԱՄՐՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Նշված հանձնարարականը մասնավորապես նախատեսված է Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումներում (մասեր 10, 11): Այսպես՝ Կոմիտեն պետությանը կոչ է անում խթանելու Կոնվենցիայի և գենդերային հավասարության մասին գիտելիքի և ըմբռնման տարածումը Կոնվենցիայի և դրա Կամրնտիր արձանագրության, Կոմիտեի ընդհանուր հանձնարարականների, հաղորդագրությունների և հետաքննությունների վերաբերյալ վերապատրաստման ծրագրեր իրականացնելու միջոցով, մասնավորապես՝ դատական իշխանության, իրավաբանական մասնագիտության տեր անձանց, ոստիկանության և իրավապահ մարմինների այլ ծառայողների, ինչպես նաև Կառավարության պաշտոնյաների և քաղաքական կուսակցությունների համար: Կոմիտեն նաև հանձնարարում է մշակել և իրականացնել կանանց ուղղված իրազեկվածության բարձրացման արշավներ՝ Կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների, Կամրնտիր արձանագրությամբ ամրագրված հաղորդագրությունների և հետաքննությունների ընթացակարգի վերաբերյալ գիտելիքների բարձրացման նպատակով՝ մեծացնելով իրենց իրավունքներին տեր կանգնելու նրանց կարողությունները:

¹⁶⁰ ՀՀ Ազգային ժողովի և Կառավարության նիստերի օրակարգերի համար տե՛ս համապատասխանաբար [National Assembly of the Republic of Armenia | Official Web Site | parliament.am](#) և [Կառավարության նիստի օրակարգ - Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում | e-gov](#):

¹⁶¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 103:

Նշում հանձնարարականի կատարման վերաբերյալ: Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագրով¹⁶², մասնավորապես, նախատեսված է, ի թիվս այլնի, նշված ժամանակահատվածում քննարկվող հանձնարարականի կատարմանն ուղղված որոշ միջոցառումների իրականացում¹⁶³, այլ է դրանց փաստացի իրականացման հարցը: Այս մասով առավելապես արժեքավոր է հատկապես տեղական ՀԿ-ների ստվերային զեկույցների, նրանց պատրաստած հետազոտությունների և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Հանձնարարականի չկատարման (մասամբ կատարման) պատճառները և վերհանված օրինաչափությունները: Կատարված է մասամբ:

ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԽՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Նախքան կոնկրետ հանձնարարականներին անդրադառնալը հարկ էնք համարում նշել այն հանգամանքը, որ թեպետ իր 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն ընդունում է, որ ՀՀ Սահմանադրության ուժով Կոնվենցիան ՀՀ իրավական համակարգի մաս է¹⁶⁴, այդուհանդերձ, Կոմիտեն մտահոգություն է հայտնում առ այն, որ ՀՀ օրենսդրությամբ կանանց նկատմամբ խտրականության հստակ և համապարփակ հասկացություն ամրագրված չէ (մաս 12): Համապատասխանաբար՝ Կոմիտեն պետությանը կոչ է անում Կոնվենցիայի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի (բ) կետին համապատասխան¹⁶⁵ ընդունելու կանանց նկատմամբ խտրականություն

¹⁶² Տե՛ս նաև ՀՀ Կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1334-Լ որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134904>:

¹⁶³ Օրինակ՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և ԵԽ շրջանակներում գենդերային հարցերի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի և ՀՀ-ի ստանձնած պարտավորությունների վերաբերյալ պետական պաշտոնյաների իրազեկվածության բարձրացումը («Գերակայություն 1.»): Բացի այդ՝ որպես միջոցառումներ նախատեսված են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողների, ինչպես նաև ոստիկանության առանձին ստորաբաժանումների համար (նաև՝ նրանց կողմից անչափահասների համար) գենդերային հավասարության թեմայի վերաբերյալ դասընթացների կազմակերպումը և անցկացումը (անչափահասների դեպքում՝ զրույցների անցկացումը): Ավելի մանրամասն տե՛ս հիշատակված Ծրագրի «Գերակայություն 3. Կանանց և տղամարդկանց լիարժեք և արդյունավետ մասնակցություն և հավասար հնարավորությունների ընդլայնում կրթության ու գիտության ոլորտում» բաժինը, նույն տեղում:

¹⁶⁴ Նշվածն ուղղակիորեն ամրագրված էր ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով, որի համաձայն՝ «Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»: Գործող ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն նման դրույթ չի նախատեսում, սակայն առանձին սահմանադրաիրավական նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս անել նույն պնդումը:

¹⁶⁵ **Կոնվենցիայի 1-ին հոդվածը**, մասնավորապես, տալիս է Կոնվենցիայի նպատակների համար «կանանց նկատմամբ խտրականություն» սահմանումը, որը նշանակում է սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակելու կամ վերացնելու քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ

արգելող համապատասխան ազգային օրենսդրություն, որը կներառի թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի խտրականությունը: Կոմիտեն նաև պետությանը կոչ է անում Կառավարության պաշտոնյաների, դատական իշխանության և հանրության շրջանում բարձրացնելու իրազեկվածությունն անուղղակի խտրականության բնույթի և փաստացի հավասարության վերաբերյալ (ի հակադրություն ձևական հավասարության՝ Վ.Կ.)¹⁶⁶: Այնուհետև Կոմիտեն պետությանը կոչ է անում իր քաղաքականություններում ու ծրագրերում գենդերային մոտեցում որդեգրելու¹⁶⁷ (մաս 13):

Հակախտրականության վերաբերյալ օրենքի ընդունման խնդրին Կոմիտեն անդրադառնում է իր 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներում՝ տալով ավելի կոնկրետ հանձնարարականներ (մասեր 8, 9): Այսպես, խոսելով օրենսդրական կարգավորումների մասին, Կոմիտեն պետությանը կոչ է անում արագացնելու հակախտրականության վերաբերյալ առանձին օրենքի ընդունումը՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածին և 2-րդ հոդվածի (բ) կետին համապատասխան, որով կամրագրվի կանանց նկատմամբ խտրականության լայն հասկացություն՝ ներառելով թե՛ պետական և թե՛ ոչ պետական դերակատարների կողմից ուղղակի և անուղղակի խտրականության ձևերը, ինչպես նաև խտրականության հատվող ձևերը՝ համաձայն թիվ 28 Ընդհանուր հանձնարարականի (2010 թ.), մաս 9, կետ ա¹⁶⁸,¹⁶⁹:

բնագավառում տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների և ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը: **Կոնվենցիայի 2-րդ հոդվածի բ) կետի** համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են «ընդունել կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականությունն արգելող համապատասխան օրենսդրական և այլ միջոցներ, ներառյալ պատժամիջոցներ, որտեղ դրանք անհրաժեշտ են»: Տե՛ս Կոնվենցիան, նույն տեղում:

¹⁶⁶ Կոնվենցիայի առարկա առանձին հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ նախատեսված միջոցառումներին ընդհանուր առմամբ անդրադարձել ենք սույն բաժնի նախորդ հանձնարարականի վերլուծության շրջանակում:

¹⁶⁷ Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագրով, ի թիվս այլ միջոցառումների, 2019-2020 թթ. համար նախատեսված է պետական բյուջեում ներառված ծրագրերի գենդերային զգայունության ապահովումը՝ պետական կառավարման բոլոր մակարդակներում գենդերային զգայուն բյուջետավորման չափորոշիչների ներդրման, ծրագրերի մշտադիտարկման միջոցով: Տե՛ս Ծրագիրը նույն տեղում: Ինչ վերաբերում է միջոցառման փաստացի իրականացմանը, ապա հարկ ենք համարում նշել, որ նշված միջոցառման ապահովման նորմատիվ հիմք հանդիսացող որևէ փաստաթուղթ մինչ օրս ընդունված չէ, ինչն ի չիք է դարձնում միջոցառման փաստացի իրականացումը: Նշված միջոցառման իրականացման կարևորության համար տե՛ս, օրինակ, [Ինպե՞ս-աշխատեցնել-գենդերային-զգայուն-բյուջետավորումը-Հայաստանում.pdf \(osf.am\)](#):

¹⁶⁸ Նշված թիվ 28 Ընդհանուր հանձնարարականի համար տե՛ս [Refworld | General Recommendation No. 28 on the Core Obligations of States Parties under Article 2 of the Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women](#):

¹⁶⁹ Այնուհետև Կոմիտեն հանձնարարում է հաջորդ հաշվետվությունում ներառել տեղեկություն այս միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև առանձնացված տվյալներ՝ վիճակագրական տվյալների վերաբերյալ Կոմիտեի թիվ 9 Ընդհանուր հանձնարարականին (1989 թ.) համապատասխան: Թիվ 9 Ընդհանուր հանձնարարականի համար տե՛ս [Refworld | CEDAW General Recommendation No. 9: Statistical data concerning the situation of women](#): Նշված մասնավոր հանձնարարականի կապակցությամբ Կառավարությունն իր 2020 թվականի 7-րդ պարբերական հաշվետվությամբ, մասնավորապես, նշում է, որ

Նշում հանձնարարականի կատարման վերաբերյալ: Հանձնարարականը կատարված չէ. հակախտրականության մասին առանձին օրենքը մինչ օրս չի ընդունվել: Այդուհանդերձ, մշակվել և 2019 թվականին շրջանառության մեջ է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը (Նախագիծ)¹⁷⁰: Ինչպես տեղեկանում ենք Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքից,¹⁷¹ նշված իրավական ակտի նախագիծը հանրային քննարկման է դրվել 15.07.2019-31.07.2019 թվականներն ընկած ժամանակահատվածում: Ներկայումս, սակայն, օրենքի նախագծի քննարկման և (կամ) ընդունման վերաբերյալ որևէ տեղեկություն առկա չէ¹⁷²: Նախագիծը, մասնավորապես, ամրագրում է խտրականության արգելքը, տալիս է խտրականության սահմանումն ըստ առանձին պաշտպանված հատկանիշների¹⁷³ ու թվարկում դրա տեսակները, տալիս իրավահավասարությունն ապահովող սուբյեկտների ցանկը և այլն: Նախագծով, մասնավորապես, նախատեսվում է այսպես կոչված Իրավահավասարության խորհրդի ստեղծումը, որը «...Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խորհրդակցական մարմին է, որի նպատակն է աջակցել Մարդու իրավունքների պաշտպանին անձանց իրավահավասարության և խտրականության բոլոր դրսևորումներից պաշտպանության ապահովման հարցում (հոդված 12, մաս 1): Նշված օրենքի ընդունմամբ կյանքի կկոչվեն քննարկվող հանձնարարականի պահանջները, բայց միայն մասամբ. խնդրահարույց է «սեռական կողմնորոշումը» և «գենդերային ինքնությունը» որպես պաշտպանված հատկանիշներ չնախատեսելը: Նշվածը կարևոր է հենց կանանց, անկախ սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից, իրավահավասարության ապահովման ու պաշտպանության առումով¹⁷⁴: Խտրականության համար հիմք հանդիսացող հանգամանք(ներ)ի գնահատումը որոշում կայացնողների հայեցողությանը թողնելը լի է նշված խմբերին պատկանող կանանց խտրականությունից արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներից զրկելու վտանգով:

տվյալներ չեն կարող ներկայացվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի դեռևս ընդունված չլինելու պատճառով: Այդուհանդերձ, Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագրով նախատեսվում է համապատասխան միջոցառման իրականացում (Գերակայություն թիվ 5, կետ 10), ավելի մանրամասն տե՛ս Ծրագիրը նույն տեղում:

¹⁷⁰ [Նախագծի տեքստի համար տե՛ս «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ, e-draft.am:](#)

¹⁷¹ [Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, e-draft.am:](#)

¹⁷² Ըստ կայքի՝ գտնում է լրամշակման փուլում:

¹⁷³ Սեռական կողմնորոշումը և (կամ) գենդերային ինքնությունը, ի թիվս այլնի, որպես պաշտպանված հատկանիշներ նախատեսված չեն:

¹⁷⁴ Հատկանշական է, որ նախագծի հանրային քննարկման ընթացքում առաջարկություններ են ներկայացվել պաշտպանված հատկանիշների ցանկն ընդլայնելու վերաբերյալ, որը լիազոր մարմինը մերժել է պաշտպանված հատկանիշների սպառիչ ցանկի սահմանման անհնարինության և աննպատակահարմարության հիմքով: Ավելի մանրամասն տե՛ս նշված օրենքների նախագծերի «Ամփոփաթերթ» հատվածը, նույն տեղում: Պաշտպանված հատկանիշների ցանկն ընդլայնելու մասին նշվում է նաև ԵԱՀԿ-ի «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (2018 թ. նոյեմբերի տարբերակի) վերաբերյալ՝ տրամադրած կարծիքում (մաս 12, պարբերություն 5), [437252.pdf \(osce.org\):](#)

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Իրավահավասարության խորհրդի՝ որպես խորհրդակցական մարմնի ստեղծմանը, ապա վերջինս հանդես կգար որպես իրավահավասարության ապահովման Ազգային մեխանիզմ: Իրավահավասարության խորհուրդը՝ ի դեմս Մարդու իրավունքների պաշտպանի, կունենար սահմանադրական կարգավիճակ՝ լրակազմված համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներով: Այսինքն՝ Մարդու իրավունքների պաշտպանին կից նման խորհրդի ստեղծումը կարող է դիտարկվել որպես սույն հետազոտության Բաժին 1-ում պետությանը ներկայացված հանձնարարականի պահանջի կատարում:

Հանձնարարականի չկատարման պատճառները և վերհանված օրինաչափությունները:

Կառավարությունն իր վերջին՝ 7-րդ պարբերական հաշվետվությունում¹⁷⁵ կրկին հղում է անում «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծին (մասեր 15-18)՝ որպես Կոմիտեի կողմից օրենսդրական կարգավորումներին վերաբերող հանձնարարականի կատարմանն ուղղված քայլ՝ որն է անդրադարձ չկատարելով դրա ընդունման ժամկետներին կամ չընդունման պատճառներին: Կառավարությունը նաև հիմնավորում է պաշտպանված հատկանիշների ոչ սպառնիչ ցանկ նախատեսելու հանգամանքը՝ մի կողմից հղում անելով ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին (դրանով ամրագրված պաշտպանված հատկանիշներին՝ Վ. Կ.), մյուս կողմից՝ իրավահավասարության ապահովման մասին ՀՀ օրենսդրությանը¹⁷⁶, որի մաս է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, իսկ ավելի կոնկրետ՝ այդ օրենքով «գենդեր» և «գենդերային խտրականություն» հասկացությունների սահմանված լինելու հանգամանքին¹⁷⁷: Մեր կարծիքով, սակայն, ՀՀ օրենսդրությամբ նշված հասկացությունների արդեն իսկ սահմանված լինելը բավարար հիմք չէ Նախագծով պաշտպանված հատկանիշների կազմում, ի թիվս այլնի, «սեռական կողմնորոշում» և «գենդերային ինքնություն» հատկանիշները չներառելու համար: Վերը նշված մեր հիմնավորմանը զուգահեռ հարկ ենք համարում նշել, որ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքը, լինելով իրավահավասարության ապահովման և խտրականության բացառման իրավահարաբերությունները կարգավորող հիմնական նորմատիվ իրավական ակտ, պետք է նախատեսի պաշտպանված հատկանիշների առավել լայն ցանկ, այդ թվում՝ սեռական պատկանելությունը և գենդերային ինքնությունը:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով¹⁷⁸ «Իրավահավասարության մասին» ՀՀ օրենքի ընդունման վերջնաժամկետ է նախատեսված 2020 թվականի առաջին կիսամյակը, ընդ որում՝ գործողության իրականացումը ֆինանսավորում չի պահանջում: Սակայն, ինչպես արդեն իսկ նշել ենք, օրենքը մինչ օրս ընդունված չէ: Վերջին երկու տարիներին ՔՈՎԻԴ-19 համավարակը և 44-

¹⁷⁵ Տե՛ս 7-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում, էջեր 4, 5:

¹⁷⁶ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 2:

¹⁷⁷ Հասկացությունների համար տե՛ս «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 3, նույն տեղում:

¹⁷⁸ Տե՛ս Ծրագիրը նույն տեղում:

օրյա պատերազմը, իհարկե, ընդհանուր առմամբ դժվարացրել են նորմալ գործընթացները, այդ թվում՝ օրենսդրական: Այդուհանդերձ, ֆինանսավորոտու չպահանջող այս օրենքի չընդունման պատճառը, մեր կարծիքով, բոլորի համար իրավահավասարության, ներառյալ անկախ սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից, օրենսդրական մակարդակով ամրագրելու քաղաքական կամքի բացակայությունն է, առնվազն ներկայումս: Այսինքն, մեր գնահատմամբ, հենց նշված պաշտպանված հատկանիշների ուղղակի նախատեսումն է, որ դժվարացնում է Նախագծի ընդունումը: Մի կողմից՝ խնդրո առարկայի վերաբերյալ հասարակական կոնսենսուսի կարծեցյալ կամ իրական բացակայության պայմաններում ներկայիս իշխանությունները խուսափում են քաղաքական ռիսկի դիմելուց՝ ի թիվս այլնի, օրենսդրորեն ուղղակիորեն ամրագրելու սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիմքով իրավահավասարության ապահովումն ու խտրականության բացառումը: Մյուս կողմից՝ իրավահավասարության ապահովման ոլորտում հիմնական օրենքի ընդունումը առանց նշված պաշտպանված հատկանիշների ուղղակի թվարկման կնսեմացնի օրենքի իրական արժեքն ու նպատակը. «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումը առաջին հերթին պիտի ծառայի հայաստանյան հասարակության մեջ առավելապես խոցելի ու մարզինալացված խմբերի նպատակաուղղված պաշտպանությանը՝ ի թիվս այլնի կրելով նաև խորհրդանշական իմաստ: Ըստ այդմ՝ հանձնարարականի չկատարման օրինաչափությունների մասին ամփոփ ցանկանում ենք նշել **հայաստանյան հասարակության առանձին շերտերի խիստ անհանդուրժողականությունն ու դիմադրությունը, դրանով պայմանավորված՝ ներկայիս իշխող քաղաքական ուժի՝ համապատասխան քաղաքական կամք դրսևորելու անկարողությունն ու քաղաքական աննպատակահարմարությունը:**

Առաջնահերթություն: «Իրավահավասարության ապահովման մասին» կամ «Իրավահավասարության մասին» ՀՀ օրենքի ընդունումը մեր կողմից սահմանվում է որպես առաջնահերթություն՝ ոչ միայն օրենքի կարևորության և Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման, այլև քաղաքական նպատակահարմարության տեսանկյունից. ներկայումս ՀՀ արդարադատության նախարարի և ՄԻՊ-ի պաշտոնները զբաղեցնում են անձինք, որոնք նախկինում կանգնած են եղել նշված օրենքի նախագծի մշակման և դրա առաջխաղացման ակունքներում: Նշվածով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով ներկայիս Կառավարության քիչ թե շատ ազատական և մարդակենտրոն քաղաքական կուրս որդեգրած լինելու հանգամանքը՝ ներկայումս նշված օրենքի ընդունումը բացառապես առաջնահերթություն է:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Այս հանձնարարականը նշված բովանդակությամբ նախատեսված է Կոմիտեի վերջին՝ 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներում (մասեր 10, 11), որի շրջանակում Կոմիտեն պետությանը ներկայացնում է առավել մանրամասն հանձնարարականներ: Այսպես՝ կանանց՝

արդարադատությանը հասանելիության վերաբերյալ թիվ 33 Ընդհանուր հանձնարարականին (2014 թ.)¹⁷⁹ համապատասխան՝ Կոմիտեն պետությանը կոչ է անում.

ա) երաշխավորելու անվճար իրավաբանական օգնության տրամադրումը բավարար միջոցներ չունեցող կանանց համար, ներառյալ գյուղական բնակավայրերի կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և փոքրամասնությունների խմբերին պատկանող կանանց համար՝ նրանց հնարավորություն տալով իրենց իրավունքների խախտման վերաբերյալ հայցեր ներկայացնելու դատարան:

Նշում հանձնարարականի կատարման վերաբերյալ: Հանձնարարականի պահանջները կատարված են մասամբ: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (2004 թ.)¹⁸⁰ 41-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է հանրային պաշտպանություն՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավասություն ունեցող անձանց բավականին լայն ցանկ: Ի թիվս այլնի, այդ անձինք են 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամները, գործազուրկները, փախստականները, անվճարունակ ֆիզիկական անձինք, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում¹⁸¹: Բացի այդ՝ 2017 թվականի դեկտեմբերի 13-ին կատարված փոփոխությունների արդյունքում անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ստացան նաև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձինք («Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, 5-րդ մաս, 16-րդ կետ): Այսպիսով՝ զուտ օրենսդրական ամրագրման առումով կարող ենք փաստել, որ հանձնարարականի պահանջները հիմնականում կատարված են. հանձնարարականում նշված գրեթե բոլոր խոցելի խմբերն ունեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու՝ ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունք: Այլ է այդ իրավունքի փաստացի իրացման խնդիրը. պետական միջոցների հաշվին որակյալ իրավաբանական օգնություն ստանալու առումով առկա է լուրջ խոչընդոտ՝ հանրային պաշտպանների թվի սակավությունը հանրային պաշտպանության գործերի մեծաթիվ լինելու պարագայում¹⁸²: Խնդրահարույց է նաև մարզերում և հատկապես

¹⁷⁹ Կոմիտեի թիվ 33 Ընդհանուր հանձնարարականի համար տե՛ս [Etpu\(ohchr.org\)](http://Etpu(ohchr.org)):

¹⁸⁰ Տե՛ս «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165070>:

¹⁸¹ Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 11-րդ կետի՝ «Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև, բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց»: Տե՛ս «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, նույն տեղում:

¹⁸² Տե՛ս, օրինակ, [52](http://ZUNRU3FL54QUCSQULENLRLUCBUSDHFBELDUNLRFEBOLVAVD.ZAUSIFLNLRLZELUAVELUNLHFB.GNCSLRLRLZAVYUNYVCLPublicDefender'sOffice(hpg.am),Gործերիքանակնանախադեպավելանումէ,Հանրայինպաշտպաններիաշխատավարձիչափիխնդիրըտարիներշարունակլուծումչիստանում.ԳևորգՄկրտչյան(iravaban.net):</p></div><div data-bbox=)

հեռավոր բնակավայրերում հանրային պաշտպանների տեղակայման և անվճար իրավաբանական օգնության մատչելիության հարցը¹⁸³:

Հանձնարարականի չկատարման պատճառները և վերհանված օրինաչափությունները:

Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ հանձնարարականի պահանջները կատարված են մասամբ, ինչի պատճառը, ակնհայտորեն, ֆինանսական միջոցների բացակայությունն է (**սաղիսարկել նաև որպես օրինաչափություն**):

Առաջնահերթություն: Ավելացնել հանրային պաշտպանների թիվը և նստավայրերի քանակը մարզերում, այդ թվում՝ հեռավոր բնակավայրերում՝ անվճար իրավաբանական օգնության իրավունքը դարձնելով փաստացի իրացվող իրավունք: Ի թիվս նշված միջոցառման, հանձնարարականի կատարմանը կարող է նպաստել նաև Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով¹⁸⁴ նախատեսված՝ իրավաբանական օգնության ոլորտի բարեփոխումներին ուղղված այլ գործողությունների իրականացումը, ինչպես, օրինակ՝ անհատույց իրավաբանական օգնության (pro bono) տրամադրման կառուցակարգերի զարգացումը (Ծրագիր, նպատակ 10):

Վերը նշված հանձնարարականի շրջանակում տրված մյուս մասնավոր հանձնարարականներն են.

բ) խրախուսել կանանց իրավունքների խախտումների, ինչպես, օրինակ՝ սեռով և գենդերով պայմանավորված խտրականության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ համապատասխան դատական և քվազի-դատական մարմիններ բողոք ներկայացնելը, այդ թվում՝ ազգային, ռեգիոնալ և տեղական մակարդակներում սահմանելով ուղղորդման մեխանիզմներ, ինչպես նաև բարձրացնելով կանանց և պատասխանատու պետական պաշտոնյանների իրազեկվածությունն այդ ուղղորդումների վերաբերյալ,

գ) դատական իշխանությանը, իրավապահ մարմինների ծառայողներին, կրթության համակարգի մասնագետներին, բժշկական օգնություն տրամադրողներին և սոցիալական աշխատողներին զգայունացնել կանանց իրավունքները պաշտպանելու և դրանց խախտման դեպքում զեկուցելու իրենց պարտականությունը կատարելու անհրաժեշտության մասին, ինչպես նաև զարգացնել դատավորների, դատախազների, ոստիկանության և իրավապահ

¹⁸³ Մարզերում հանրային պաշտպանների նստավայրերի համար տե՛ս [Նստավայրեր | Public Defender's Office \(hpg.am\)](https://www.hpg.am/): Նստավայրերը, ինչպես տեսնում ենք, հիմնականում մարզկենտրոններում են, ինչը կանոնավոր գործող միջբաղադրյալի հասարակական տրանսպորտի բացակայության պարագայում առնվազն խնդիրներ է ստեղծում անվճար իրավաբանական օգնության մատչելիության առումով:

¹⁸⁴ Տե՛ս ՀՀ Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1133-Լ որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582>:

համակարգի այլ ծառայողների կարողությունը համապատասխան քրեախրավական դրույթների հետևողական կիրառման վերաբերյալ,

դ) ապահովել դատական ակտերի համակարգված և արդյունավետ կատարումը՝ ԱՆ հարկադիր կատարման ծառայության մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներն ավելացնելու, ինչպես նաև համապատասխան տույժեր կիրառելու և երեխայի խնամքի վերաբերյալ որոշումների կատարման ուշացման կամ չկատարման դեպքում տուժած կողմին փոխհատուցում նախատեսելու միջոցով:

Նշում հանձնարարականի կատարման վերաբերյալ: Վերը նշված երեք մասնավոր հանձնարարականների կատարման վերաբերյալ Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագրով ըստ էության որևէ միջոցառում նախատեսված չէ¹⁸⁵: Նշված մասնավոր հանձնարարականների կատարմանը թեպետ Կառավարությունն անդրադառնում է իր 2020 թվականի 7-րդ պարբերական հաշվետվությունում, սակայն ըստ էության նշված միջոցառումները բավարար չեն հանձնարարականների պահանջների ամբողջական կատարման տեսանկյունից¹⁸⁶: Մասնավորապես, Կառավարությունն իր հաշվետվությունում բ) կետով նախատեսված մասնավոր հանձնարարականի կապակցությամբ հիմնականում շեշտադրում է հանրային պաշտպանության ինստիտուտի առկայությունը և դրա ընդլայնումը՝ ըստ էության նեղացնելով հանձնարարականի պահանջները՝ այն հանգեցնելով անվճար իրավաբանական օգնության տրամադրման: (գ) Մասնավոր հանձնարարականի կապակցությամբ Կառավարությունը շեշտում է դատավորների, դատախազների և քննիչների համար կազմակերպված և անցկացված դասընթացները: Ինչ վերաբերում է (դ) կետով նախատեսված՝ դատական ակտերի համակարգված և արդյունավետ կատարման վերաբերյալ հանձնարարականին, Կառավարությունը հպանցիկ հղում է անում համակարգը բարելավելուն ուղղված Կառավարության կողմից իրականացվելիք միջոցառումներին: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով, ի թիվս այլնի, նախատեսվում են հարկադիր համակարգի բարեփոխումներ (Նպատակ 11): Մասնավորապես, ի թիվս այլնի, ակնկալվում է ինստիտուցիոնալ կարգավորման ենթարկել երեխայի տեսակցության վերաբերյալ ակտերի հարկադիր կատարման առանձնահատկությունները¹⁸⁷:

Հանձնարարականի մասնակի կատարման պատճառները և վերհանված օրինաչափությունները:

Մեր գնահատմամբ՝ պատճառը ոչ համակարգային և ոչ հասցեական մոտեցումն է:

¹⁸⁵ Տե՛ս Ծրագիրը նույն տեղում: Վերաբերելի որևէ միջոցառում նախատեսված չէ նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով, տե՛ս նույն տեղում:

¹⁸⁶ Տե՛ս Կառավարության 2020 թվականի 7-րդ պարբերական հաշվետվությունը, նույն տեղում (մասեր 19-28):

¹⁸⁷ Միջոցառման իրականացումը նախատեսված է 2023 թվականի 1-ին կիսամյակում:

Առաջնահերթություն: Վերջին նշված երեք մասնավոր հանձնարարականների կատարումը, մեր գնահատմամբ, առաջնահերթություն է՝ նկատի ունենալով հանձնարարականների պահանջների կյանքի կոչման համար բավարար նորմատիվ հիմքի առկայությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի:

ԲԱԺԻՆ 7. ԿԱՆԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կոմիտեի 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումներում նշված հիմնախնդրին անդրադարձը հպանցիկ է: Կոմիտեն, մասնավորապես, հանձնարարում է Կառավարությանը ձեռնարկել ժամանակավոր հատուկ միջոցներ կանանց համար աշխատանքի հնարավորություններ ստեղծելու նպատակով, այդ թվում՝ հատուկ վարկային և փոխառության ծրագրեր կին գործարարների համար¹⁸⁸:

Կոմիտեի վերը նշված դիտարկմանն ընդառաջ Կառավարությունն իր սկզբնական պարբերական հաշվետվությունում (վերանայված տարբերակ, 1997 թ.) վկայակոչում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված մի շարք երաշխիքներ, ինչպես, օրինակ՝ աշխատանքի ազատ ընտրության, աշխատանքային իրավահարաբերությունների ոլորտում կանանց և տղամարդկանց հավասարության, համարժեք աշխատանքի դիմաց կանանց՝ տղամարդկանց հետ հավասար վարձատրության երաշխիքները և այլն¹⁸⁹: Կառավարությունը նաև անդրադարձ է կատարում գործող սոցիալական ապահովության համակարգին և կանանց համար գործող սոցիալական երաշխիքներին¹⁹⁰, կին փախստականների, միգրանտ և ներքին տեղահանված կանանց հիմնախնդիրներին և դրանց ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներին¹⁹¹:

Կառավարությունն իր 2-րդ պարբերական հաշվետվությունում (1999 թ.) կրկին առավելապես հղում է անում աշխատանքային և սոցիալական ապահովության ոլորտում գործող օրենսդրությանը և կանանց համար դրանցով ամրագրված երաշխիքներին¹⁹²: Կոմիտեի՝ ժամանակավոր հատուկ միջոցներ կիրառելու միջոցով կանանց համար աշխատանքի հնարավորություններ ստեղծելու, այդ թվում՝ կին գործարարների համար հատուկ վարկային և փոխառության ծրագրեր նախատեսելու վերաբերյալ Կառավարությունը խիստ թռուցիկ նշում է անում: Մասնավորապես, խոսվում է կանանց համար մշակված մասնագիտական վերապատրաստման դասընթացների, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացումը խթանելու համար երկարաժամկետ փոխառությունների և դրամաշնորհների տրամադրման ծրագրերի ներդրման մասին՝ առանց մանրամասնելու նշվածը¹⁹³: Հատկանշական է, որ Կառավարությունը տնտեսության ոլորտում կանանց անհավասար դրությանն անդրադառնալիս հաճախ է հղում անում հետխորհրդային շրջանում մասնավորեցման ու շուկայական տնտեսությանն անցման գործընթացներին և դրանից բխող բացասական երևույթներին¹⁹⁴:

¹⁸⁸ Ավելի մանրամասն տե՛ս Կոմիտեի 1997 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մաս 62, էջ 81:

¹⁸⁹ Ավելի մանրամասն տե՛ս Կառավարության սկզբնական հաշվետվությունը, նույն տեղում, մաս 54:

¹⁹⁰ Տե՛ս նույն տեղում, մասեր 55-57:

¹⁹¹ Տե՛ս նույն տեղում, մասեր 61-64:

¹⁹² Ավելի մանրամասն տե՛ս Կառավարության 2-րդ պարբերական հաշվետվությունը (1999 թ.), նույն տեղում, մասեր 58-80, էջեր 16-19:

¹⁹³ Ավելի մանրամասն տե՛ս Կառավարության 2-րդ պարբերական հաշվետվությունը (1999 թ.), նույն տեղում, մաս 61, էջ 16:

¹⁹⁴ Տե՛ս նույն տեղում, մասեր 60, 75, 79 և այլն:

2002 թվականի Եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն ներկայացնում է կոնկրետ հանձնարարականներ աշխատանքային հարաբերությունների ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Ի թիվս այլնի, մտահոգություն հայտնելով տղամարդկանց համեմատությամբ կանանց առավել մեծ թվով գործազրկության, աշխատանքային հարցերի, մասնավորապես՝ աշխատավարձերի վերաբերյալ սեռի հատկանիշով տարբերակված տվյալների բացակայության, հավասար աշխատանքային հնարավորությունների մասին օրենսդրության բացակայության վերաբերյալ, Կոմիտեն պետությանը ներկայացնում է համապատասխան հանձնարարականներ: Մասնավորապես՝

- ընդունել հավասար աշխատանքային հնարավորությունների վերաբերյալ օրենսդրություն: Կոմիտեն նաև հանձնարարում է ներդնել վերապատրաստումների ծրագրեր՝ օժանդակելու կանանց զբաղվածությանը և կոչ է անում Կառավարությանը հավաքելու սեռի հատկանիշով տարբերակված տվյալներ՝ կանանց զբաղվածության բոլոր բնագավառների և հատկապես աշխատավարձերի վերաբերյալ՝ կանանց զբաղվածության խնդրին տեղեկացված լուծում տալու նպատակով: Լրացուցիչ՝ Կոմիտեն Հայաստանին հանձնարարում է վերանայել կանանց պաշտպանություն տրամադրող իր օրենսդրությունը՝ վերացնելու դրա՝ կանանց զբաղվածության հարցում ցանկացած հնարավոր բացասական ազդեցությունը¹⁹⁵:

Կառավարությունն իր միավորված 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվությամբ (2007 թ.) կրկին մանրամասն անդրադարձ է կատարում 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև նոր Աշխատանքային օրենսգրքով (2004 թ.)¹⁹⁶ և հարակից օրենսդրությամբ ամրագրված երաշխիքներին ու իրավակարգավորումներին: Կառավարությունը նաև անդրադառնում է 2003 թվականի աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին¹⁹⁷, որում նաև նախատեսված են միջոցառումներ՝ ուղղված կանանց աշխատանքի (զբաղվածության) ապահովմանը¹⁹⁸:

2009 թվականի Եզրափակիչ դիտարկումներից սկսած՝ Կոմիտեն առանձին-առանձին հանձնարարականներ է ներկայացնում կրթության, զբաղվածության, կանանց առողջության պահպանման հիմնախնդիրների, ինչպես նաև խոցելի խմբերի կանանց պաշտպանության առնչությամբ: Նկատի ունենալով ծավալային սահմանափակումները՝ 2009 և 2016 թվականների Եզրափակիչ դիտարկումները ներկայացնում ենք առավել ընդհանուր գծերով՝ հատկապես հաշվի առնելով նաև այս կամ այն հանձնարարականը կրկնելու հանգամանքը: Այնուհետև անդրադարձ

¹⁹⁵ Ավելի մանրամասն տե՛ս Կոմիտեի 2002 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մասեր 56-57, էջ 155:

¹⁹⁶ Տե՛ս համապատասխանաբար <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780> և <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166596>:

¹⁹⁷ Տե՛ս ՀՀ Կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» թիվ 994-Ն որոշումը, [ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԴԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ \(irtek.am\)](http://www.irtek.am):

¹⁹⁸ Ավելի մանրամասն տե՛ս Կառավարության 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվությունը (2007 թ.), նույն տեղում, մաս 180, էջ 38:

կկատարվի նշված հանձնարարականների կատարման ուղղությամբ Կառավարության ձեռնարկած միջոցառումներին:

Այսպես՝ կրթության հիմնախնդրի կապակցությամբ Կոմիտեն, ի թիվս այլնի, պետությանը կոչ է անում վերացնելու աղջիկների՝ կրթությունը շարունակելու համար դժվարություններ ստեղծող խոչընդոտները: Բացի այդ՝ կրկին ներկայացվում է դպրոցական դասագրքերի վերանայումը շարունակելու նախկինում տրված հանձնարարականը՝ գենդերային դերերի վերաբերյալ կարծրատիպները վերացնելու նպատակով¹⁹⁹: Զբաղվածության հիմնախնդրի կապակցությամբ Կոմիտեն, ողջունելով Հայաստանին աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների²⁰⁰ արդյունքում, ի թիվս այլնի, հավասարության օրենսդրական երաշխավորման առնչությամբ, այդուհանդերձ, մտահոգություն է հայտնում զբաղվածության ոլորտում առկա խտրականության (փաստացի՝ Վ.Կ.) վերաբերյալ՝ կոչ անելով միջոցներ ձեռնարկելու հնարավորությունների հավասարության երաշխավորման ուղղությամբ²⁰¹: Կանանց առողջության պահպանման հիմնախնդրի առնչությամբ Կոմիտեն, ի թիվս այլնի, հանձնարարում է շարունակել միջոցառումները՝ առողջապահական ծառայություններին և, մասնավորապես, վերարտադրողական առողջապահական համակարգերին կանանց հասանելիությունը բարելավելու նպատակով: Կոմիտեն լրացուցիչ հանձնարարում է ավելի մեծ ուշադրություն հատկացնել ընտանիքի պլանավորմանը և վերարտադրողական առողջապահական կրթությանը՝ թիրախավորելով տղաներին և աղջիկներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով համապատասխան տարիքի չհասած աղջիկների վաղ հղիության կանխարգելմանը...²⁰² Խոցելի խմբերի ներկայացուցիչ կանանց հիմնախնդրի առնչությամբ Կոմիտեն, ի թիվս այլնի, մասնակից պետությունից պահանջում է իր հաջորդ պարբերական հաշվետվությունում ներկայացնել կանանց խոցելի խմբերի փաստացի վիճակի համապարփակ պատկերը Կոնվենցիայի գործողության բոլոր ոլորտների վերաբերյալ²⁰³:

Այժմ ներկայացնենք Կոմիտեի վերջին՝ 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումները հիմնական գծերով: Մասնավորապես՝ կրթության հիմնախնդրի կապակցությամբ Կոմիտեն Հայաստանին կոչ է անում ուժեղացնելու ռազմավարությունները՝ ավանդաբար արական սեռի գերակշռությամբ կրթության ոլորտներում աղջիկների ներգրավմանը խոչընդոտող խտրական կարծրատիպների և կառուցվածքային խոչընդոտների խնդրին լուծում տալու նպատակով²⁰⁴:

Եզրափակիչ դիտարկումների «Աշխատանք և տնտեսական հզորացում» հատվածում Կոմիտեն ողջունում է աշխատանքին, ձեռնարկատիրական գործունեությանը, ֆինանսական վարկերին

¹⁹⁹ Մասնավորապես տե՛ս Կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մասեր 30, 31, էջ 7:

²⁰⁰ Նկատի ունենալ 2004 թվականին նոր աշխատանքային օրենսգրքի ընդունումը:

²⁰¹ Նույն տեղում, մասեր 32, 33, էջեր 7, 8:

²⁰² Նույն տեղում, մասեր 34, 35, էջ 8:

²⁰³ Նույն տեղում, մասեր 36, 37, էջեր 8, 9:

²⁰⁴ Մասնավորապես տե՛ս Կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մասեր 22, 23, էջեր 7, 8:

կանանց հասանելիությանն օժանդակելու ուղղությամբ իրականացվող ծրագրերը: Այդուհանդերձ, Կոմիտեն բարձրացնում է մի շարք մտահոգություններ, որոնց կապակցությամբ Հայաստանին հանձնարարում է, ի թիվս այլնի, կիրառել «համարժեք աշխատանքի դիմաց համարժեք վարձատրություն» սկզբունքը: Բացի այդ՝ հանձնարարվում է վերացնել մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը²⁰⁵: Բացի այդ՝ հանձնարարվում է կանանց համար ստեղծել գրանցված աշխատանքին հասանելիություն ունենալու ավելի մեծ հնարավորություններ, այդ թվում՝ տղամարդկանց և կանանց միջև կենցաղային և ընտանեկան պարտականությունների հավասարաչափ բաշխումը խթանելու, մանկական խնամքի բավարար և համապատասխան հաստատություններ նախատեսելու միջոցով... Նաև հանձնարարվում է ընդունել աշխատավայրում սեռական ոտնձգությունը սահմանող և արգելող օրենսդրություն՝ հաջորդ պարբերական հաշվետվությունում ներառելով համապատասխան տվյալներ սեռական ոտնձգության վերաբերյալ բողոքների, հետաքննությունների, քրեական հետապնդումների և իրավախախտում կատարած անձանց նկատմամբ նշանակված պատիժների վերաբերյալ: Կրկին հանձնարարվում է ուժեղացնել ջանքերը ցածր տոկոսայնությամբ միկրոֆինանսներին և միկրովարկերին կանանց հասանելիությունն ընդլայնելու նպատակով՝ կանանց հնարավորություն տալով ներգրավվելու եկամտաբեր աշխատանքի մեջ և սկսելու իրենց բիզնեսը: Վերջում հանձնարարվում է մշակել աշխատավայրում գենդերային խտրականության և սեռական ոտնձգության վերաբերյալ բողոքներ ներկայացնելու խորհրդապահական և ապահով համակարգ և երաշխավորել տուժողների՝ խախտված իրավունքների վերականգնման միջոցներին արդյունավետ հասանելիությունը²⁰⁶:

Կանանց առողջության պահպանմանը վերաբերող հանձնարարականները ներկայացված են պարբերական հաշվետվության 26-րդ և 27-րդ մասերում²⁰⁷: Այսպես՝ Կանանց և առողջապահության վերաբերյալ Կոմիտեի թիվ 24 Ընդհանուր հանձնարարականին (1999 թ.) համապատասխան՝ Կոմիտեն հանձնարարում է.

- շարունակել ջանքերը մատչելի հակաբեղմնավորիչները բոլոր կանանց ու աղջիկների համար դարձնելու հասանելի և առկա, հատկապես աղքատության մեջ և գյուղական կամ հեռավոր բնակավայրերում ապրողների համար.
- մեծացնել կանանց հասանելիությունը հիմնական առողջապահական և վերարտադրողական առողջապահական ծառայություններին, հատկապես գյուղական

²⁰⁵ Ցանկը հաստատված է ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 2308-Ն որոշմամբ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=21817>: **Որոշումը գործում է:**

²⁰⁶ Ավելի մանրամասն տե՛ս Կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մասեր 24, 25, էջեր 8, 9:

²⁰⁷ Նույն տեղում, էջ 9: Մեռով պայմանավորված աբորտների՝ հղիության արհեսական ընդհատումների վերաբերյալ հատուկ հանձնարարականի համար տե՛ս նույն տեղում, մաս 28:

բնակավայրերի կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և էթնիկ փոքրամասնությունների խմբերին պատկանող կանանց համար, այդ թվում՝ պետական բյուջեից տրամադրվող հատկացումները մեծացնելու և առողջության պարտադիր ապահովագրության համակարգեր ներդնելու ճանապարհով.

- կանանց բոլոր խմբերի համար ապահովել հասանելիությունը ժամանակակից հակաբեղմնավորիչներին և ընտանիքի պլանավորման ծառայություններին, ինչպես նաև հասանելիությունը ապահով աբորտներին.
- մշակել և իրականացնել իրազեկվածության բարձրացման արշավներ և կարողությունների զարգացում առողջապահական համակարգի անձնակազմի համար՝ վերացնելու հաշմանդամություն ունեցող և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով ապրող կանանց նկատմամբ խտրականությունը՝ առողջապահական ծառայությունների մատուցման ընթացքում.
- մշակել և իրականացնել իրազեկվածության բարձրացման հատուկ արշավներ ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի և պատասխանատու սեռական վարքի վերաբերյալ, այդ թվում՝ սահմանամերձ շրջաններում և միգրանտ համայնքներում:

Կոմիտեի՝ 2016 թվականի հանձնարարականների առումով հատկապես կարևոր է ամուսնությանը և ընտանեկան հարաբերություններին վերաբերող հատվածը: Այսպես՝ ընդգծելով ՀՀ ընտանեկան օրենսգրքում և «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքում 2013 թվականին կատարված փոփոխությունները, որով վերացվեց ամուսնության համար օրինական տարիքի տարբերությունը, Կոմիտեն, այդուհանդերձ, խնդրահարույց է համարում մշակութային, էթնիկական և այլ հիմքերով այս կանոնից շեղվելու՝ դեռևս գոյություն ունեցող հնարավորությունը: Այսպես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի (2004 թ.) 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ ամուսնացող տղամարդու և կնոջ համար ամուսնական տարիք է սահմանված տասնութ տարեկանը: Հարկ է նշել, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքում այս փոփոխությունները կատարվել են 2013 թվականին, մինչ այդ նույն 10-րդ հոդվածի 1-ին մասով կանանց համար ամուսնական տարիք էր սահմանված տասնյոթ, իսկ տղամարդկանց համար՝ տասնութ տարեկանը: Իսկ մեր հիշատակած 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է»²⁰⁸: Իհարկե, ՀՀ ընտանեկան օրենսգրքը որևէ նշում չի կատարում ընդհանուր կանոնից նման բացառություն սահմանելու կիրառման դեպքերի վերաբերյալ, ինչը կլիներ խտրականություն կամ առնվազն Կոնվենցիայի շրջանակում ստանձնած միջազգային պարտավորություններից շեղում: Այդուհանդերձ, ակնհայտ է, որ նման բացառությունը հենց Հայաստանում բնակվող էթնիկ-ազգային փոքրամասնությունների համար է սահմանված: Կոմիտեն, ի թիվս այլնի, Հայաստանից պահանջում է հաջորդ պարբերական հաշվետվությունում ներկայացնել սեռի և էթնիկ խմբի հատկանիշով տարբերակված

²⁰⁸ Տե՛ս ՀՀ ընտանեկան օրենսգրքը, հոդված 10, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152573>:

առանձնացված վիճակագրական տվյալներ մինչև 18 տարեկանը լրանալը գրանցված ամուսնությունների վերաբերյալ²⁰⁹:

Նշում հանձնարարականի կատարման վերաբերյալ: Ինչպես տեսնում ենք վերևում, նաև Կառավարության 2015 և 2020 թվականների պարբերական հաշվետվությունների ուսումնասիրությունից, հանձնարարականների պահանջները կատարված են մասամբ: Հանձնարարականների պահանջները մասամբ կատարելու փաստը, ի թիվս այլնի, կարելի է բացատրել սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքների՝ պետության համար ոչ պարտադիր լինելու հանգամանքով: Այս առումով կարևոր է այս խումբ հանձնարարականների կատարումը դիտարկել ՀՀ Սահմանադրության 3-րդ «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները» գլխի համատեքստում:

Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ, այդուհանդերձ, կան հանձնարարականներ, որոնք պետությունը կարող է և պետք է իրականացնի, ինչպես նաև ամուսնության համար նախատեսված՝ 18 տարեկանից թույլատրվող շեղումները և այլն. էթնիկ-ազգային փոքրամասնությունների շահերի և մարդու իրավունքների հավասարության շահերի հաշվեկշռի արդյունքում նախապատվությունը պետք է տրվի վերջինիս:

²⁰⁹ Ավելի մանրամասն տե՛ս Կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումները, նույն տեղում, մասեր 46, 47, էջ 12: Կոմիտեի՝ առանձին խմբերի ներկայացուցիչ կանանց հիմնախնդիրների առնչությամբ տե՛ս նույն տեղում, մասեր 30-47, էջեր 10-13:

Ամփոփում

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի իշխանությունների կողմից վերջին 15 տարիների ընթացքում մշտապես, թեպետ ոչ հետևողականորեն միջոցներ են ձեռնարկվել Կոմիտեի առանձին հանձնարարականների պահանջների կատարման ուղղությամբ, որոշ հաջողություններով հանդերձ, Հայաստանը շատ հաճախ թերացել է այդ հարցում: Հանձնարարականների պահանջների հետևողական, լիարժեք և համապարփակ կատարման համար, մեր գնահատմամբ, կարևոր է հատկապես հայաստանյան հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ ավանդական կարծրատիպերի հաղթահարումը և կնոջ տնտեսական հզորացումը, ինչը հնարավորություն կտա խթանելու կանանց ակտիվ մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքի այլ ոլորտներում, պայքարելու թրաֆիքինգի և պոռնկության շահագործման դեմ՝ դրանք սնող պատճառները վերացնելով, ինչպես նաև կանխարգելելու և նվազեցնելու կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեպքերը: Առանձին հանձնարարականների կատարման առումով կարևորվում է հատկապես պառլամենտի՝ ՀՀ Ազգային ժողովի դերը, և այս առումով անկյունաքարային է «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումը՝ պաշտպանվող հատկանիշների լայն ցանկի ամրագրմամբ, ինչպես նաև իրավահավասարության ապահովման ազգային մեխանիզմի ստեղծումը, որում կարող է մեկտեղվել ֆինանսական և մարդկային ռեսուրսներով լրակազմված կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմը: Պակաս կարևոր չէ նաև Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը: Նշվածի իրագործման համար անհրաժեշտ է ժողովրդավարական արժեքներին հավատարմություն հայտնած ներկայիս իշխանությունների կողմից համապատասխան քաղաքական կամքի դրսևորումը՝ գործելու ի նպաստ իրավահավասարության և խտրականության բացառման՝ հասարակության ավելի լայն շերտերի շրջանակում այդ արժեքների շուրջ նոր հաշվեկշիռ հաստատելու նպատակով:

Օգտագործված աղբյուրներ

- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք (2017 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672>
- [«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, e-draft.am](https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672)
- «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (1991 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docID=67169>
- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք (2013 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>
- «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (կոնվենցիա) վերաբերյալ հիմնական թյուրընկալումներ և հակափաստարկներ, [888Convention_210_messages_AUGUST8.pdf \(moj.am\)](https://www.moj.am/888Convention_210_messages_AUGUST8.pdf)
- «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի (Ստամբուլյան) կոնվենցիա (հայերեն), 2011 թ., [Convention Armenian version \(coe.int\)](https://www.coe.int/t/t20110901/Convention_Armenian_version/Convention_Armenian_version.pdf)
- «Կուսակցությունների մասին» սահմանադրական ՀՀ օրենք (2016 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166242>
- «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-101-Ն օրենք (2005 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=1789>
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (1996 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=337>,
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (2001 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=1013>
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (2016 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161509>
- «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք (2000 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=141689>
- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք (2014 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165185>

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք (2020 թ.),
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145079>

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենք (2004 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165070>
https://www.moj.am/storage/uploads/888Convention_210_messages_AUGUST8.pdf,

Գործերի քանակն աննախադեպ ավելանում է, հանրային պաշտպանների աշխատավարձի չափի խնդիրը տարիներ շարունակ լուծում չի ստանում. Գևորգ Մկրտչյան, IRAVABAN.NET, [Գործերի քանակն աննախադեպ ավելանում է, Հանրային պաշտպանների աշխատավարձի չափի խնդիրը տարիներ շարունակ լուծում չի ստանում. Գևորգ Մկրտչյան \(iravaban.net\)](#)

Թրաֆիքինգ, ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջ, [ԹՐԱՖԻՔԻՆԳ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ \(police.am\)](#)

Ինչպես աշխատացնել գենդերային զգայուն բյուջետավորումը Հայաստանում, Բաց Հասարակության Հիմնադրի ամեր-Հայաստան (2020 թ.), հեղինակությամբ՝ Լուսինե Հովհաննիսյան, Շուշան Ղահրիյան, [Ինչպե՞ս աշխատացնել գենդերային-զգայուն-բյուջետավորումը-Հայաստանում.pdf \(osf.am\)](#)

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, [Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք \(e-draft.am\)](#)

«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ (2019 թ.), [«ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ, e-draft.am«ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»](#)

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (1979 թ.), <https://www.arlis.am/documentView.aspx?docID=60505>

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրություն (1999 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=31426>

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 1997 թվականի եզրափակիչ դիտարկումներ (A/52/38/Rev.1), [Committee on the Elimination of Discrimination Against Women, Concluding Observations/Comments - Armenia \(umn.edu\)](#)

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 2002 թվականի եզրափակիչ դիտարկումներ (A/57/38), [University of Minnesota Human Rights Library \(umn.edu\)](#)

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 2009 թվականի Եզրափակիչ դիտարկումներ, <https://www.refworld.org/docid/49c0c8292.html>

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներ, <https://www.refworld.org/docid/583863b34.html>

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 19 ընդհանուր հանձնարարական, [INT CEDAW GEC 3731 E.pdf \(ohchr.org\)](#)

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 25 ընդհանուր հանձնարարական, [General recommendation No \(un.org\)](#)

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 28 ընդհանուր հանձնարարական, [Refworld | General Recommendation No. 28 on the Core Obligations of States Parties under Article 2 of the Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women](#)

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 33 ընդհանուր հանձնարարական, [Etpu \(ohchr.org\)](#)

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 9 ընդհանուր հանձնարարական, [Refworld | CEDAW General Recommendation No. 9: Statistical data concerning the situation of women:](#)

Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք (17.06.2011 թիվ 23), [ՀՆԴԴԵՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ \(irtek.am\)](#)

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջ, [Ombudsman](#)

Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առքուվաճառքի (թրաֆիքինգ) կանխման 2004-2006 թվականների միջոցառումների ազգային ծրագիր (2004 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docID=11989>

Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թվականներին կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը (1998 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=6730>

Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը (2019 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134904>

Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը (2019 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134904>

Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիր, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=38293>

Հանրային 54 պաշտպանները աշխատում են ծանրաբեռնված. հաստիքները չեն ավելանում, գործերը՝ ընդհակառակը, Հանրային պաշտպանի գրասենյակի պաշտոնական կայքէջ, [ՀԱՆՐԱՅԻՆ 54 ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ. ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ՉԵՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ. ԳՈՐԾԵՐԸ՝ ԸՆԴՀԱՄԱՌԱԿԸ | Public Defender`s Office \(hpg.am\)](#)

Հանրային պաշտպանի գրասենյակի նստավայրեր, [Նստավայրեր | Public Defender`s Office \(hpg.am\)](#)

ՀՀ աշխատանքային օրենսգիրք (1972 թ.), [ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ \(irtek.am\)](#)

- ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166596>
- ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագիր, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=76932>
- ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենք (2018 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167184>
- ՀՀ ընտանեկան օրենսգիրք (2004 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152573>
- ՀՀ ընտրական օրենսգիրք (1999 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67563>
- ՀՀ ընտրական օրենսգիրք (2011 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=101641>
- ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, (2016 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166249>
- ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» թիվ 994-Ն որոշում, [ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ \(irtek.am\)](http://www.irtek.am/ru/2003/08/08/994)
- ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 2308-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=21817>
- ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1133-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582>
- ՀՀ Կառավարության 2-րդ պարբերական հաշվետվություն (1999 թ.), [Refworld | UN Committee on the Elimination of Discrimination against Women: State Party Report, Armenia](http://www.refworld.org/docid/3a640.html)
- ՀՀ Կառավարության միավորված 3-րդ և 4-րդ պարբերական հաշվետվություն (2007 թ.), [Refworld | Consideration of reports submitted by States parties under article 18 of the Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women : combined 3rd and 4th periodic reports of States parties : Armenia](http://www.refworld.org/docid/3a640.html)
- ՀՀ Կառավարության միավորված 5-րդ և 6-րդ պարբերական հաշվետվություն (2015 թ.), <https://www.refworld.org/publisher,CEDAW,STATEPARTIESREP,ARM,56e7d3a64,0.html>:
- ՀՀ կառավարության նիստի օրակարգ, Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում կայքէջ, [Կառավարության նիստի օրակարգ - Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում | e-gov](http://www.e-gov.am)

ՀՀ Գառավարության սկզբնական հաշվետվություն (1997 թ., վերանայված տարբերակ), [CEDAW/C/ARM/1/Corr.1 - CONSIDERATION OF REPORTS SUBMITTED BY STATES PARTIES UNDER ARTICLE 18 OF THE CONVENTION ON THE ELIMINATION OF ALL FORMS OF DISCRIMINATION AGAINST WOMEN; Armenia](#)

ՀՀ Սահմանադրություն (1995 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1>

ՀՀ Սահմանադրություն (2005 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>

ՀՀ քրեական օրենսգիրք (1961 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=4>

ՀՀ քրեական օրենսգիրք (2003 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=2262>

ՀՀ քրեական օրենսգիրք (2021 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165138>

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն (2019 թ.), [Lokal 2020-1978hav1.docx \(live.com\)](#)

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիր (2019 թ.), [Lokal 2020-1978hav2_inko2178.docx \(live.com\)](#)

Միջանկյալ կարծիք «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի (2018թ. նոյեմբերի տարբերակի) վերաբերյալ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (2019 թ.), [437252.pdf \(osce.org\)](#)

Նիստեր, ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, [National Assembly of the Republic of Armenia | Official Web Site | parliament.am](#)

Պատգամավորներ, ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, [National Assembly of the Republic of Armenia | Official Web Site | parliament.am](#)

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը (1985 թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167042>

Տեղի է ունեցել ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի առաջին նիստը, Առաջին լրատվական (2019 թ.) [Տեղի է ունեցել ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի առաջին նիստը | 1in.am](#)

Տեղի ունեցավ ՀՀ ՄԻՊ-ին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի անդրանիկ նիստը (2022 թ.), ՀՀ ՄԻՊ-ի պաշտոնական կայքէջ, [Տեղի ունեցավ ՀՀ ՄԻՊ-ին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի անդրանիկ նիստը , Ombudsman](#)